# «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

# ՖՀՄՍ համապատասխան՝ Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

# 2024թ. երկրորդ եռամսյակի համար

**Բովանդակություն**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ....... 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ....... 2
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված  հաշվետվություն ....... 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն....... 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ....... 5
Ներածություն....... 6
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ....... 7

| *Հազ. ՀՀ դրամ* | **Ծան.** | **30/06/2024թ. (չստուգված)** | **31/12/2023թ. (ստուգված)** |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | 61,379,455 | 78,159,849 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 8 | 137,329 | 199,957 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 66,209,274 | 99,410,514 |
| *Ներդրումային արժեթղթեր* | *10* | | |
| - Բանկի կողմից պահվող | | 58,814,181 | 21,422,936 |
| - վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված | | - | - |
| Հաճախորդներին տրված վարկեր | 11 | 484,148,301 | 455,199,337 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 12 | 86,011,127 | 83,406,426 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 36 | 1,345,194 | 1,775,530 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 13 | 29,467,434 | 27,110,978 |
| Այլ ակտիվներ | 16 | 15,156,495 | 17,108,253 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **802,668,790** | **783,793,780** |
| | | | |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Բանկերից ներգրավված միջոցներ | 17 | 515,980 | 1,152,894 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 18 | 524,419,755 | 503,231,650 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 19 | 22,270,810 | 21,087,118 |
| Այլ փոխառու միջոցներ | 20 | 89,704,437 | 95,125,094 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 14 | 1,800,925 | 3,812,792 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 14 | 162,896 | 732,149 |
| Այլ պարտավորություններ | 22 | 11,161,204 | 12,880,467 |
| Ստորադաս վարկեր | 21 | 11,885,102 | 12,661,577 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **661,921,109** | **650,683,741** |
| | | | |
| **ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 23 | 55,000,000 | 55,000,000 |
| Էմիսիոն եկամուտ | 23 | 1,750,000 | 1,750,000 |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ | 24 | 3,517,422 | 3,517,422 |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | | 3,891,400 | 3,909,911 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | | 348,502 | 151,526 |
| Չբաշխված շահույթ | | 76,240,357 | 68,781,180 |
| **Ընդամենը կապիտալ** | | **140,747,681** | **133,110,039** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **802,668,790** | **783,793,780** |

Հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է Բանկի տնօրինության անունից 2024թ. հուլիսի 15-ին:

| *Հազ. ՀՀ դրամ* | **Ծան.** | **01/04/2024-30/06/2024թ. (չստուգված)** | **01/01/2024-30/06/2024թ. (չստուգված)** | **01/04/2023-30/06/2023թ. (չստուգված)** | **01/01/2023-30/06/2023թ. (չստուգված)** |
|---|---|---|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ | 26 | 19,910,870 | 38,221,210 | 16,169,513 | 31,542,631 |
| Այլ տոկոսային եկամուտ | 26 | 3,012,274 | 6,017,712 | 2,411,229 | 4,409,408 |
| Տոկոսային ծախս | 26 | (9,400,641) | (18,736,166) | (7,486,411) | (14,458,358) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **13,522,503** | **25,502,757** | **11,094,331** | **21,493,681** |
| Վարկային կորստի գծով ծախսի հակադարձում | 15 | (834,772) | (1,005,934) | 505,064 | 116,555 |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո** | | **12,687,731** | **24,496,823** | **11,599,395** | **21,610,236** |
| | | | | | |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 27 | 3,746,868 | 7,291,721 | 3,314,324 | 6,286,648 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 27 | (1,488,488) | (2,849,120) | (1,164,330) | (2,210,704) |
| Զուտ օգուտ/(վնաս)՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | | (140,310) | 119,282 | 283,705 | 89,084 |
| Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից | | 1,310,929 | 2,355,310 | 1,285,818 | 2,669,590 |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | | 7,808 | (24,939) | (61,879) | 56,483 |
| Ասոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին | 36 | 309,560 | 557,105 | 247,002 | 462,657 |
| Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս) | 31 | - | - | (14,243) | 31,474 |
| Այլ եկամուտ | 28 | 51,081 | 316,011 | 118,763 | 372,277 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | | **3,797,448** | **7,765,370** | **4,009,160** | **7,757,509** |
| | | | | | |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (4,824,564) | (10,295,557) | (4,583,711) | (9,626,540) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 13 | (897,027) | (1,789,361) | (792,612) | (1,499,155) |
| Այլ գործառնական ծախսեր | 29 | (696,682) | (1,397,312) | (648,751) | (1,281,644) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 30 | (1,440,886) | (2,765,840) | (1,120,038) | (2,331,875) |
| **Ոչ տոկոսային ծախս** | | **(7,859,159)** | **(16,248,071)** | **(7,145,112)** | **(14,739,214)** |
| | | | | | |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | | **8,626,021** | **16,014,122** | **8,463,443** | **14,628,531** |
| Շահութահարկի գծով ծախս | 14 | (1,489,344) | (3,073,457) | (1,755,766) | (3,014,227) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **7,136,677** | **12,940,665** | **6,707,677** | **11,614,304** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ | | | | | |
| Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ | 23 | 1,297.58 | 2,352.85 | 1,219.58 | 2,111.69 |

| *Հազ. ՀՀ դրամ* | Ծան. | 01/04/2024-30/06/2024թ. (չստուգված) | 01/01/2024-30/06/2024թ. (չստուգված) | 01/04/2023-30/06/2023թ. (չստուգված) | 01/01/2023-30/06/2023թ. (չստուգված) |
|---|---|---|---|---|---|
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **7,136,677** | **12,940,665** | **6,707,677** | **11,614,304** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ* | | | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի փոփոխություն | | 29,415 | 157,644 | 120,997 | 305,923 |
| Ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխությունները | | (66,917) | 48,589 | (89,863) | (89,863) |
| Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով | 14 | 6,750 | (37,122) | (9,378) | (38,891) |
| **Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ** | | **(30,752)** | **169,111** | **21,756** | **177,169** |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ* | | | | | |
| Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում | | - | - | - | - |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների գծով շահույթ/(վնաս) | | (213) | (815) | (28) | (28) |
| Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով | 14 | 39 | 147 | 5 | 5 |
| **Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ** | | **(174)** | **(668)** | **(23)** | **(23)** |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող* | | | | | |
| Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի մասնաբաժին | | 11,519 | 34,798 | 25,374 | 46,341 |
| Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով | 14 | (2,074) | (6,264) | (4,567) | (8,341) |
| **Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ համապարփակ եկամտի մասնաբաժին** | | **9,445** | **28,534** | **20,807** | **38,000** |
| **Տարվա այլ համապարփակ վնաս՝ առանց հարկերի** | | **(21,481)** | **196,977** | **42,540** | **215,146** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **7,115,195** | **13,137,642** | **6,750,217** | **11,829,450** |

*«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ*
*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2024թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար*

| *Հազ. ՀՀ դրամ* | **Բաժնե-տիրական կապիտալ** | **Էմիսիոն եկամուտ** | **Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով պահուստ** | **Հիմնական միջոցների վերա-գնահա տումից աճ** | **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ** | **Չբաշխված շահույթ*** | **Ընդամենը կապիտալ** |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2024թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)** | **55,000,000** | **1,750,000** | **3,517,422** | **3,909,911** | **151,526** | **68,781,180** | **133,110,039** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | - | - | - | - | - | 12,940,665 | **12,940,665** |
| Այլ համապարփակ եկամուտ | - | - | - | - | 196,977 | | **196,977** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **-** | **-** | **-** | **-** | **196,977** | **12,940,665** | **13,137,642** |
| Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին | - | - | - | (18,511) | - | **18,511** | **-** |
| Գլխավոր պահուստի համալրում էմիսիոն եկամտի հաշվին | - | - | - | - | - | - | **-** |
| Հայտարարված շահաբաժիններ | - | - | - | - | - | (5,500,000) | **(5,500,000)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **(5,500,000)** | **(5,500,000)** |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 24) | - | - | - | - | - | - | **-** |
| **2024թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)** | **55,000,000** | **1,750,000** | **3,517,422** | **3,891,400** | **348,502** | **76,240,356** | **140,747,681** |
| | | | | | | | |
| **2023թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)** | **55,000,000** | **1,750,000** | **3,076,495** | **4,985,941** | **877,300** | **43,712,388** | **109,402,124** |
| Հաշվետու տարվա շահույթ | - | - | - | - | - | 11,614,304 | **11,614,304** |
| Այլ համապարփակ վնաս | - | - | - | - | 215,146 | | **215,146** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ** | **-** | **-** | **-** | **-** | **215,146** | **11,614,304** | **11,829,450** |
| Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին | - | - | - | - | - | - | **-** |
| Հայտարարված շահաբաժիններ | - | - | - | - | - | (4,400,000) | **(4,400,000)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | - | - | - | - | - | (4,400,000) | **(4,400,000)** |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 24) | - | - | 440,927 | - | - | - | **440,927** |
| **2023թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)** | **55,000,000** | **1,750,000** | **3,517,422** | **4,985,941** | **1,092,446** | **50,926,692** | **117,272,501** |

* Չբաշխված շահույթը ներառում է Բանկի Գլխավոր պահուստը՝ 8,250,000 հազ. ՀՀ դրամի չափով:

| *Հազ. ՀՀ դրամ* | Ծան. | 01/01/2024-30/06/2024թ. (չստուգված) | 01/01/2023-30/06/2023թ. (չստուգված) |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով) | | 35,630,424 | 29,126,694 |
| Ստացված այլ տոկոսներ | | 6,017,712 | 4,409,408 |
| Վճարված տոկոսներ | | (17,764,478) | (13,996,068) |
| Ստացված միջնորդավճարներ | | 7,291,721 | 6,286,648 |
| Վճարված միջնորդավճարներ | | (2,849,120) | (2,210,704) |
| Զուտ (ելք)/մուտք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ածանցյալ ֆինանսական գործիքներից | | 10,178 | (161,541) |
| Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից | | 2,355,310 | 2,669,590 |
| Վճարված այլ գործառնական ծախսեր | | (3,251,482) | (1,410,630) |
| Ստացված այլ եկամուտ | | 316,642 | 429,056 |
| Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ | | (12,222,458) | (10,229,020) |
| Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր | | (2,747,329) | (2,331,635) |
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները** | | **12,787,120** | **12,581,798** |
| *Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում* | | | |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | | 169,568 | 293,332 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | 32,511,144 | 5,671,095 |
| Հաճախորդներին տրված վարկեր | | (33,770,474) | (47,773,729) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | (2,661,577) | (17,989,498) |
| Այլ ակտիվներ | | (5,633,246) | (3,836,497) |
| *Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)* | | | |
| Բանկերից ներգրավված միջոցներ | | (518,468) | (2,693,985) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 29,091,206 | 32,268,462 |
| Այլ պարտավորություններ | | 7,933,514 | 3,276,030 |
| **(Գործառնական գործունեությամբ օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը** | | **39,908,787** | **(18,202,992)** |
| Վճարված շահութահարկ | | (5,508,797) | (5,974,647) |
| **Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ** | | **34,399,990** | **(24,177,639)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (3,666,321) | (2,374,292) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | 13,465 | 850 |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (37,118,219) | - |
| Ներդրումային արժեթղթերի վաճառք | | (378,475) | 1,902,157 |
| Ստացված շահաբաժիններ | 36 | 1,021,608 | 701,762 |
| **Ներդրումային գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | | **(40,127,942)** | **230,477** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | | |
| Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր(մարումներ) | | 1,430,569 | 8,268,134 |
| Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր(մարումներ) | | (6,550,409) | (5,774,565) |
| Ստացված ստորադաս վարկեր | | - | - |
| Վճարված շահաբաժիններ | 23 | (5,500,000) | (4,400,000) |
| **Ֆինանսական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | | **(10,619,840)** | **(1,906,431)** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (470,096) | (1,718,283) |
| Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը | | 37,494 | 44,971 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում | | (16,780,394) | (27,526,905) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին** | | 78,159,849 | 88,369,285 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին** | **7** | **61,379,455** | **60,842,380** |

**Ներածություն**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն, («ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներ»), «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի («Բանկ») և նրա դուստր ձեռնարկությունների համար («Խումբ»):

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ից: Բանկը ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին վերակազմակերպվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը հետագայում վերակազմավորվել է բաց բաժնետիրական ընկերության և 2021թ. ներկայացրել է նախնական հրապարակային առաջարկ, որից հետո Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX): Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

***Հիմնական գործունեության նկարագրություն***. Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 65 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Ընկերությունը համախմբվում է սույն ֆինանսական հաշվետվություններում: Բանկին է պատկանում «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ բաժնետոմսերի 100%-ը:

2021 թվականի դեկտեմբերի 23-ին Բանկը հիմնադրել է ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ ՍՊԸ կրթական կենտրոնը, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Բանկին: Կենտրոնի նպատակն է՝ իրականացնել կրթական ծրագրեր և ներգրավել որակյալ մասնագետների:

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2024թ. հունիսի 30-ի և 2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| **Բաժնետեր** | **30/06/2024, %** | **31/12/2023, %** |
|---|---:|---:|
| «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ | 81.62 | 81.61 |
| Sacam International SAS | 4.55 | 4,55 |
| Այլ | 13.83 | 13.84 |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** |

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն Խմբի մայր կազմակերպությունն է և չունի մեկ վերահսկող կողմ: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ- հիմնադրվել է 2017թ. մայիսի 6-ին՝ Բանկի նախկին բաժնետերեր հանդիսացող Գյուղական փոխօգնության 10 ասոցիացիաների կողմից, որոնք ներկայումս հանդիսանում են «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի բաժնետերեր: Գյուղական փոխօգնության միավորումները («Միավորումներ») Հայաստանի Հանրապետության 10 մարզերում գործող հասարակական կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են մարզերում գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով: Նշված 10 միավորումները միասին ունեն 74,940 անդամ: Այլ տողում ներկայացված Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

***Ներկայացման արժույթ.*** Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով («ՀՀ դրամ»), եթե այլ բան նշված չէ:

## 1 Խմբի գործառնական միջավայրը

### Ընդհանուր դրույթներ

***Բնապահպանական, սոցիալական և կառավարում (ԲՍԿ):*** 2023թ. Խումբն իրականացրել է կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում Բանկի գյուղատնտեսական պորտֆելի որակական ցուցանիշների վրա, որի արդյունքների համաձայն,ՀՀ պաշտոնական տվյալներով կլիմայի փոփոխության մինչև 2030թ. կանխատեսումային տվյալները էական ազդեցություն չեն ունենա գյուղատնտեսական վարկերի պորտֆելի որակը բնութագրող փոփոխականների վրա: Միևնույն ժամանակ, Խմբի կողմից իրականացված վերլուծությունը հետագայում կարող է վերագնահատվել:

***Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև.*** 2022թ. փետրվարից հետո, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության ոլորտների համար:

Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի բռնկումից ի վեր ԵՄ արտահանման հոսքերի կողմնորոշվածությունը շարունակաբար ավելի մեծ ծավալով փոխվում է դեպի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ տնտեսություններ: Այս կողմնորոշվածության փոփոխությունը խթանել է հարակից առևտրային և տրանսպորտային ծառայությունները, կրճատել է մրցակցությունը դեպի Ռուսաստան հայրենական արտադրանքի արտահանման համար և տարածաշրջանում ակտիվացրել է նախկինում պասիվ ներդրումները:

2022թ. մարտից ԵՄ-ի առևտրային պատժամիջոցները գրեթե կիսով չափ կրճատել են բլոկի ապրանքների արտահանումը Ռուսաստան և Բելառուս:

Ռուս-ուկրաինական պատերազմի բանակցային ճանապարհով կարգավորման հավանականությունը կարճաժամկետ հեռանկարում մնում է ցածր, ինչը վկայում է երկարատև հակամարտության և առևտրային պատժամիջոցների շարունակման վերաբերյալ: Առևտրային ուղիների կողմնորոշումների փոփոխությունը և տնտեսական ակտիվության ներհոսքը կունենան ավելի երկարաժամկետ ազդեցություն՝ նաև ներկայիս պատերազմի շրջանակներից դուրս: Ակտիվանում են նախկինում պասիվ վիճակում գտնվող ներդրումները ենթակառուցվածքների, SS-ի և արտադրության բնագավառներում: Ենթակառուցվածքի և/կամ տեղական արտադրության ցանկացած բարելավում խթանում է երկարաժամկետ աճի ներուժը: Երկրների կառավարությունները ստիպված են հաշվի առնել Ռուսաստանի և մնացած աշխարհի հետ կապերի պահպանման և հավելյալ տնտեսական օգուտներ քաղելու միջև առկա նուրբ սահմանները՝ երկրորդական պատժամիջոցներից խուսափելու համար:
Հայաստանի համար կանխատեսվում է, որ 2024-2025թթ. աճը կպահպանվի տարեկան 4. 5 տոկոսի մակարդակով: Չնայած սպասվում է Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի հետագա թուլացում , վերաարտահանումը և զբոսաշրջությունը կշարունակեն նպաստող գործոններ հանդիսանալ տնտեսական ակտիվության համար: Այնուամենայնիվ, երկարաժամկետ աճին կխոչընդոտեն ապրանքային կախվածությունը, տրանսպորտային կապերի և լոգիստիկ շղթաների խաթարումները և Հայաստանի և Ադրբեջանի միջև հնարավոր շարունակական աշխարհաքաղաքական լարվածությունը (Համաշխարհային բանկի հունվարի 2024թ. կանխատեսում):

Խումբը իր PD-ի կանխատեսումները և ԱՎԿ-ի հաշվարկները պատրաստելիս հաշվի է առել վերը նշված դիտարկումներն ու ակնկալիքները:

Հայաստանը վերջին տարիներին զգալի սոցիալ-քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրել: Այս իրադարձությունները ներառել են 2020թ. COVID-19 համաճարակի և Ադրբեջանի հետ

հակամարտությունը, և ավելի քան 100,000 էթնիկ հայերի տեղահանումը և անցումը ՀՀ տարածք՝ 2023թ. -ին:

Չնայած այս մարտահրավերներին, տնտեսությունը շարունակել է ցուցաբերել դիմակայունությունը, ինչը կարելի է վերագրել մակրոտնտեսական ճկուն քաղաքականությանը, ներառյալ գնաճի ակտիվ թիրախավորմանը, հարկաբյուջետային պարտավորությունների կատարմանը և ֆինանսական հատվածի արդյունավետ վերահսկողությանը: Հայաստանի աճի տեմպերն արագացել են 2022թ. -ին (ՀՆԱ-ի 12. 6% աճ), որոնք պահպանվել են կայուն 2023թ. ընթացքում (ՀՆԱ-ի 8. 7% աճ), ինչին նպաստել են նաև արտարժույթի փոխարժեքը, միգրանտների և բիզնեսի ներհոսքը՝ հիմնականում Ռուսաստանից: Գնաճը, որը գագաթնակետին էր հասել ուկրաինական պատերազմի հետևանքով, արագ կերպով նվազել է: Այնուամենայնիվ, տարածաշրջանային մակարդակում անվտանգային իրավիճակը զգալիորեն վատթարացավ 2023թ. սեպտեմբերին այն բանից հետո, երբ Ադրբեջանի կառավարությունը լիակատար վերահսկողության տակ առավ Լեռնային Ղարաբաղը, ինչը պատճառ դարձավ դեպի Հայաստան մոտ 100,000 էթնիկ հայերի արտագաղթին: Կառավարությունն ապահովել է արագ արձագանք՝ քաղաքականության պատշաճ միջոցներով տեղահանված անձանց անմիջական կարիքներինաջակցելու համար:

S&P Global Ratings-ը 2024 թվականի փետրվարի 23-ին հաստատել է Հայաստանի համար իր «BB-/B» երկարաժամկետ և կարճաժամկետ, արտարժույթով և տեղական արժույթով արտահայտված սուվերեն վարկերի վարկանիշները: Երկարաժամկետ վարկանիշների կանխատեսումը կայուն է. Fitch Ratings-ը հաստատել է Հայաստանի երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշը (IDR) «BB-»՝ կայուն կանխատեսմամբ, 2024թ. հունվարի 26-ին:
Ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է գնահատել, և ղեկավարության ներկա ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման նպատակով Խումբն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 4-ը ներառում է ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ներառել ակնկալվող վարկային կորուստների չափման մոդելներում:

## 2 Պատրաստման հիմքը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝«ՖՀՄՍ ստանդարտներ»):

ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված՝ իրական արժեքով ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ, տարածքների և սարքավորումների (հող, շենք և փոխադրամիջոց) վերագնահատմամբ, ֆինանսական գործիքների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (“FVTPL”) և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով դասակարգմամբ («FVOCI») և սովորական բաժնետոմսերի իրական արժեքով դասակարգմամբ՝ աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի համար: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են

բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանալից վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրազեկ և հանգամանալից օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:
Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

***Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում*** Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ծեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը:

Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները: Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

***Իրական արժեքի չափում.*** Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 34-ում:

***Սկզբնական ճանաչում.*** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը պարտավորվում ծեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

***Սկզբնական չափում.*** Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքներն ի սկզբանե չափվում են իրենց իրական արժեքով և որը ճշգրտվում է գործարքին ուղղակիորեն վերագրելի միջնորդավճարների և ծախսերի չափով այն գործիքների դեպքում, որոնք իրական արժեքով չեն վերագնահատվում շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը գործարքի գինն է: Եթե Խումբը գտնում է, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և եթե այդ իրական արժեքը հիմնված է շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի վրա, կամ հիմնված է գնահատման տեխնիկայի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի շուկաների տվյալները, ապա սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը շահույթում կամ վնասում. բոլոր մյուս դեպքերում, ֆինանսական գործիքի սկզբնական չափումը ճշգրտվում է այնպես, որ սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը փոխանցվի ապագա ժամանակաշրջաններին: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը ճանաչում է հետաձգված տարբերությունը որպես շահույթ կամ վնաս, միայն այն դեպքում, երբ մուտքային տվյալները դառնում են դիտարկելի կամ եթե գործիքը ապաճանաչվում է:

***Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ.*** Խումբը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝ ամորտիզացված արժեք, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը դասակարգում է Visa C-ի բաժնետոմսերը որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ: Խումբը կարող է հաշվառել ֆինասական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային հանձնառություններից և երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Պահանջներ բանկերի նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

Խումբը չափում է բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը, ամորտիզացված արժեքով, ներդրումային արժեթղթերը ամորտիզացված արժեքով են հաշվառվում միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ակտիվը պահել պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

***Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*** Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Խումբը տրամադրում է ֆինանսական և կատարողական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:

Երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիա, և ակնկալվող վարկային կորուստների պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

***Ֆինանսական վարձակալության համար տրված կանխավճարներ.*** Խումբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

***Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում.*** Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*** Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

***Պարտադիր դրամական մնացորդներ ԿԲ-ում.*** ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն Խմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

***Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ*** Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերում տեղաբաշխված միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

***Փոխառություններ.*** Փոխառությունները ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառություններ, թողարկված պարտատոմսերը: հաշվետվությունում: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

***Ստորադաս վարկեր.*** Ստորադաս պարտքը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

***Թողարկված պարտքային արժեթղթեր.*** Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակները, Խմբի կողմից թողարկված պարտատոմսերը: Պարտքային արժեթղթերը ներկայացվում են ամորտիզացված արժեքով:

***Վարձակալություն***

*Խումբը՝ որպես վարձակալ.* Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

*Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ.* Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ:

Վարձակալության վճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել:

*Կարճաժամկետ վարձակալություն և ցածրարժեք ակտիվների վարձակալություն.* Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև ցածրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող):

*Գործառնական – Խումբը՝ որպես վարձատու* Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս:

*Ֆինանսական – Խումբը՝ որպես վարձատու* Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է ժամանակացույցի վրա, որը սահմանում է հաստատուն պարբերական տոկոսադրույք է վարձատուի կողմից վարձակալության ներքո զուտ ներդրումների դիմաց: Վարձակալությունից ստացված ֆինանսական եկամուտը գրանցվում է «Այլ տոկոսային հասույթի» կազմում՝ շահույթում կամ վնասում: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Վարկային կորստի պահուստը ճանաչվում է ընդհանուր ԱՎԿ մոդելի համաձայն: ԱՎԿ-ը որոշվում է նույն կերպ, ինչ ամորտիզացված արժեքով չափվող վարկերի և փոխտվությունների դեպքում: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համախառն հաշվեկշռային արժեքով, բացառությամբ Փուլ 3-ի արժեզրկված վարկերի, որոնց դիմաց տոկոսային եկամուտը ճանաչվում է զուտ հաշվեկշռային արժեքով:

***Վերանայված վարկեր*** Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերանայել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- Վարկի արժույթի փոփոխությունը,
- Վարկի գործընկերոջ փոփոխությունը,

Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը փոփոխության արդյունքում դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: Որպեսզի վերակառուցված վարկը վերադասակարգվի 3-րդ փուլից, պետք է բավարարվեն ստորև նշված պայմանները.
- Ամսական վճարումների գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարները ամբողջությամբ վճարվել են, մայր գումարի և տոկոսների 3 անընդմեջ վճարումներ կատարվել են `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան.
- Ճկուն վճարման գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարներ ամբողջությամբ վճարվել են, այնուհետև մայր գումարի և տոկոսների հերթական վճարումները կատարվել են նվազագույնը 6 ամիս փորձաշրջանի համար `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:

***Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում***

*Դուրսգրում* Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Խումբը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Խումբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

***Հարկում.*** Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

***Հիմնական միջոցներ.*** Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից աճն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

| | **Տարիներ** |
|---|---|
| Շենքեր | 46 |
| Սարքավորումներ | 7-20 |
| Փոխադրամիջոցներ | 8 |
| Այլ | 7-15 |

Վարձակալված ակտիվի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

***Բռնագանձված ակտիվներ.*** Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և զուտ իրացվելի արժեքի նվազագույնով:

***Բաժնետիրական կապիտալ.*** Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

***Շահաբաժիններ.*** Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

***Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվներ.*** Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հանդիսանում Խմբի ակտիվներ:

***Սեգմենտային հաշվետվություն*** Խմբի սեգմենտների հաշվառումը հիմնված է հետևյալ գործառնական սեգմենտների վրա. մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ

բանկային գործունեություն, գյուղատնտեսություն, առևտրային և ներդրումային բանկային գործունեություն և ֆինանսական վարձակալություն:

***Տոկոսային և համանման եկամուտ և ծախս.*** Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Ֆինանսական վարձակալության դիմաց տրված կանխավճարներից և ֆինանսական վարձակալության գծով ճանաչված հասույթից տոկոսային հասույթը ճանաչվում է շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվությունում «Այլ տոկոսային հասույթ» տողում՝ պայմանագրային տոկոսադրույքով:

Հաճախորդներին տրված վարկերի տույժերից տոկոսային եկամուտը ներկայացվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով» հոդվածում:

***Միջնորդավճարների գծով եկամուտ.*** Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից համախմբված ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

*Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից*

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

*Միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով*

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

*Հաճախորդների հավատարմության ծրագրեր*

Խումբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խումբը որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորների վրա հիմնված ծրագրերի դեպքում, Խումբը, ընդհանուր առմամբ, ճանաչում է պարտավորություն կուտակված միավորների համար, որոնք ակնկալվում է, որ օգտագործվելու են հաճախորդների կողմից, որը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով, երբ միավորները լրանում են: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

*Շահաբաժիններից եկամուտ*

Եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի վճարումը ստանալու իրավունքը:

***Արտարժույթի փոխարկում.*** Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, որը Բանկի և նրա դուստր ձեռնարկության գործառնական արժույթն է: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտներ/(վնասներ)» հոդվածում:

Արտարժույթով գործարքի պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ Կենտրոնական բանկի փոխարժեքի տարբերությունները ներառված են Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի առքուվաճառքից տողում ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2024թ. հունիսի 30-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմել են համապատասխանաբար 388.16 ՀՀ դրամ և 404. 79 դրամ 1 ԱՄՆ դոլարի և 415.72 ՀՀ դրամ և 447. 90 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց:

***Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ.*** Խմբի աշխատակիցները (ներառյալ ղեկավարները) վարձատրություն են ստանում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով: Այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

*Բաժնային գործիքներով մարվող գործարքներ*

Բաժնային գործիքներով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ վարձատրությունը տրամադրվում է համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 25-ում:

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողականի պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում):

Ծախս չի ճանաչվում այն վարձատրությունների համար, որոնք, ի վերջո, չեն առաջացնում իրավունք, քանի որ շուկայական պայմանները և/կամ ծառայության պայմանները չեն կատարվել: Այն դեպքում, երբ վարձատրությունը ներառում է շուկայական կամ իրավունք չառաջացնող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է թե ոչ, պայմանով, որ կատարողական և/կամ ծառայության բոլոր մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնային գործիքներով մարվող գործարքի պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված գործարքի իրական արժեքն է տրամադրման ամսաթվի դրության, պայմանով, որ պահպանվում են գործարքի իրավունքի առաջացման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե գործարքը չեղարկվում է կազմակերպության կամ գործընկերոջ կողմից, վարձատրության

իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

## 4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են. հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում:

Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Խումբը յուրաքանչյուր տարի գնահատում է շուկայի փոփոխությունները՝ էական փոփոխությունների տեսանկյունից, և ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և փոխադրամիջոցների գնահատման համար, ըստ անհրաժեշտության և կիրառելիության (ծանոթագրություն 34):

***Իրական արժեքի չափում.*** Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

***Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ:*** Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականը որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Խմբի ԱՎԿ հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 6,048,341 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 5,982,161 հազ. ՀՀ դրամ)։ Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններ 12 և 13։

***Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում:*** Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ։ ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա։ Կիրառվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, եթե այդ գործարքների համար ակտիվ շուկա առկա չէ։ Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները։ Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 36-ում։

## 5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտել 2023թ. հունվարի 1-ից.

***ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը։ Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ։ ՖՀՄՍ17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար։ Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա)։ Ապահովագրողները արտացոլում են ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից։ Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս։ Խումբը ստանդարտը կիրառել է իր կողմից թողարկվող որոշակի կատարողական երաշխիքների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում վարկային պարտավորության սահմանմանը։ Ստանդարտի ընդունումը էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա։

***Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն։ Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները։

***Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների

փոփոխությունները: Փոփոխությունների ընդունումը էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին):*** 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

***Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):*** Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին):*** Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխարինակելիության բացակայություն» (թոզարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին):*** 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև

փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024** | **31/12/2023** |
|---|---|---|
| Առձեռն դրամական միջոցներ | 22,336,499 | 22,665,289 |
| Ընթացիկ հաշիվներ Կենտրոնական բանկում, ներառյալ պարտադիր պահուստները | | |
| (չսահմանափակված մաս, տես Ծանոթագրություն 10) | 24,406,886 | 38,560,913 |
| Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում | | |
| - վարկանիշը՝ BBB-(Baa3) և բարձր | 3,759,470 | 10,847,364 |
| - վարկանիշը՝ BBB-(Baa3) -ից ցածր և առանց վարկանիշի | 1,938,803 | 1,429,994 |
| *Կարճաժամկետ ավանդներ այլ բանկերում* | | |
| - վարկանիշը՝ BBB-(Baa3) և բարձր | 8,939,915 | 4,663,224 |
| Արժեզրկում | (2,118) | (6,935) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **61,379,455** | **78,159,849** |

Վարկերի որակը բացահայտելու համար Բանկը օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության վարկանիշները:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում ընթացիկ հաշիվները ներառում են պարտադիր պահուստ՝ 26,085,728 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 26,139,452 հազ. ՀՀ դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2023թ. ՝ 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2023թ. ՝ 18%):

Արտարժույթով ներգրաված գումարներից բանկերը պարտավոր են գումարների 6%-ը պահպանել տեղական արժույթով (2023թ.՝ 6%) որպես դրամական միջոցների ավանդ ԿԲ-ում, իսկ 12%-ը (2023թ.՝ 12%)՝ արտարժույթով:

Ավելին, սահմանափակված է պահուստավորված գումարները արտարժույթով հանելու բանկերի հնարավորությունը, ուստի Խումբը արտարժույթով ավանդադրված պարտադիր պահուստները դասակարգում է որպես պահանջներ բանկերի նկատմամբ (Ծանոթագրություն 9):

Դրամական միջոցների համարժեքների բոլոր մնացորդները բաշխվում են 1-ին փուլին: Ստորև ներկայացված է տարվա ընթացքում ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024** | **31/12/2023** |
|---|---|---|
| ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ | 53,194 | 53,194 |
| ԱՎԿ փոփոխություններ | (4,817) | (46,259) |
| **Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **2,118** | **6,935** |

Դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 32-ում:

## 8 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական և անվանական արժեքները.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024 | | 31/12/2023 | |
|---|---|---|---|---|
| | **Անվանական արժեք** | **Իրական արժեք** | **Անվանական արժեք** | **Իրական արժեք** |
| **Ակտիվներ** | | | | |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | | | | |
| Տոկոսադրույքի սվոփ | 4,189,455 | 128,409 | 4,189,455 | 190,192 |
| Արժութային սվոփ | 2,087,520 | 8,920 | 8,577,752 | 9,765 |
| | **6,276,975** | **137,329** | **12,767,207** | **199,957** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | | | | |
| Արժութային սվոփ/ պարտավորություններ | - | - | - | 58,552 |

## 9 Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջների կազմը

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024** | **31/12/2023** |
|---|---|---|
| **Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ** | | |
| Վարկային քարտերով գործառնությունների գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում | 4,215,000 | 6,005,000 |
| Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծան. 7) | 26,245,204 | 26,827,740 |
| **Ընդամենը** | **30,460,204** | **32,832,740** |
| | | |
| **Պահանջներ այլ բանկերի նկատմամբ** | | |
| Հայկական բանկեր | | |
| - վարկանիշը՝ Ba1-ից Ba3 | - | - |
| Օտարերկրյա բանկեր | | |
| - վարկանիշը՝ AA1-ից AA3 | 19,408 | 20,240 |
| - վարկանիշը՝ A1-ից մինչև A3 | 776,888 | 4,167,101 |
| Թղթակցային հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ այլ բանկերում | 41,572 | 163,157 |
| **Ընդամենը պահանջներ այլ բանկերի նկատմամբ** | **837,868** | **4,350,498** |
| | | |
| **Այլ դեբիտորական պարտքեր** | | |
| Չմարված գործարքներ | 1,445,016 | 208,919 |
| Դրամական փոխանցումների համակարգերից ստացվելիք գումարներ | 1,570,704 | 1,914,392 |
| Պլաստիկ քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ | 294,607 | 125,360 |
| | | |
| **Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ** | | |
| Հայաստանի բանկերից ստացվելիք գումարներ | 31,650,557 | 60,035,070 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ՝ մինչև արժեզրկումը | **66,258,956** | **99,466,979** |
| Արժեզրկում | (49,682) | (56,465) |
| **Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ** | **66,209,274** | **99,410,514** |

2024թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստները ներառում են արտարժույթով արտահայտված պահուստներ 26,245,204 հազ. ՀՀ դրամի չափով (2023 թ.՝ 26,827,740 հազ. ՀՀ դրամ) (տես Ծանոթագրություն 7):

Չմարված գործարքների մեջ ներառված գումարը հունիսի 30-ի դրությամբ չի հաշվարկվել Խմբի ԿԲ հաշվում: Այս գումարը մուտքագրվել է հունվարի առաջին աշխատանքային օրը որպես դրամական միջոց Խմբի ընթացիկ հաշվին:

2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31 դրությամբ բանկերի նկատմամբ պահանջների հետ կապված ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Ընդամենը** |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ առ 1 հունվարի 2024թ.** | **(56,465)** | **(56,465)** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | (49,682) | **(49,682)** |
| Մարված ակտիվներ | 56,465 | **56,465** |
| **Առ 30 հունիսիի 2024թ.** | **(49,682)** | **(49,682)** |

| *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Ընդամենը** |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ առ 1 հունվարի 2023թ.** | **(111,174)** | **(111,174)** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | (56,465) | **(56,465)** |
| Մարված ակտիվներ | 111,174 | **111,174** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **(56,465)** | **(56,465)** |

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 32-ում:

## 10 Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը 2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են.

| **Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր** | **30/06/2023թ.** | **31/12/2024թ.** |
|---|---|---|
| *Հազ. ՀՀ դրամ* | | |
| **Բանկի կողմից պահվող** | | |
| Պետական արժեթղթեր | 36,010,088 | - |
| Հայկական ընկերությունների պարտատոմսեր | 1,108,131 | - |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով արժեթղթեր** | **37,118,219** | **-** |

| **Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **-** | **-** | **-** | **-** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 37,118,219 | - | - | **37,118,219** |
| Մարված ակտիվներ | - | - | - | **-** |
| Դուրս գրված գումարներ | - | - | - | **-** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **37,118,219** | **-** | **-** | **37,118,219** |

| **Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **-** | **-** | **-** | **-** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 62,889 | - | - | **62,889** |
| Մարված ակտիվներ | - | - | - | **-** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | - | - | - | **-** |
| Դուրս գրված գումարներ | - | | | |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **62,889** | **-** | **-** | **62,889** |

| **Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **-** | **169,536** | | **169,536** |
| Մարված ակտիվներ | - | (118,675) | | **(118,675)** |
| Դուրս գրված գումարներ | - | (50,861) | - | **(50,861)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **-** | **-** | **-** |

| **Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **-** | **79,196** | **-** | **79,196** |
| Մարված ակտիվներ | - | (55,437) | - | **(55,437)** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | - | 27,102 | - | **27,102** |
| Դուրս գրված գումարներ | - | (50,861) | - | **(50,861)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **-** | **-** | **-** |

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքների հարակից ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **18,534,900** | **-** | **-** | **18,534,900** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | - | - | - | |
| Մարված ակտիվներ | - | - | - | |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | 437,078 | - | - | **437,078** |
| Դուրս գրված գումարներ | - | - | - | **-** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (356,683) | - | - | **(356,683)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **18,615,295** | **-** | **-** | **18,615,295** |

| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **35,929** | **-** | **-** | **35,929** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | - | - | - | **-** |
| Մարված ակտիվներ | - | - | - | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | - | - | - | **-** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ* | (13,890) | - | - | **(13,890)** |
| Դուրս գրված գումարներ | - | - | - | **-** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (526) | - | - | **(526)** |
| **Առ 30 հունիսի 2024թ. .** | **21,514** | **-** | **-** | **21,514** |

| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **18,403,647** | **2,882,144** | **-** | **21,285,791** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 8,621,672 | - | - | **8,621,672** |
| Մարված ակտիվներ | (8,486,954) | (2,029,145) | - | **(10,516,099)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | (246,041) | - | - | **(246,041)** |
| Դուրս գրված գումարներ | - | (852,999) | - | **(852,999)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | 242,576 | - | | **242,576** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **18,534,900** | **-** | **-** | **18,534,900** |

| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **190,505** | **581,344** | **-** | **771,849** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 13,944 | | | **13,944** |
| Մարված ակտիվներ | (46,385) | - | - | **(46,385)** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | - | - | | **-** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ* | (122,674) | 271,655 | - | **148,981** |
| Դուրս գրված գումարներ | | (852,999) | - | **(852,999)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | 539 | - | | **539** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **35,929** | **-** | **-** | **35,929** |

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային և այլ բաժնային գործիքներ** *Հազ. ՀՀ դրամ* | **30 հունիսի 2024թ.** | **31 դեկտեմբերի 2023թ.** |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| Պետական պարտատոմսեր | | |
| ՀՀ կառավարության արժեթղթեր | 18,328,408 | 18,238,634 |
| **Կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| Հայկական ընկերությունների պարտատոմսեր | 286,887 | 296,266 |
| **Բաժնային գործիքներ** | | |
| Չգնանշված բաժնային արժեթղթեր | 397,953 | 112,983 |
| **Ընդամենը՝ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ բանկի կողմից պահվող պարտքային և այլ բաժնային գործիքներ** | **19,013,248** | **18,647,883** |

| **Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ բանկի կողմից պահվող պարտքային գործիքներ** *Հազ. ՀՀ դրամ* | **30 հունիսի 2024թ.** | **31 դեկտեմբերի 2023թ.** |
|---|---|---|
| Գնանշված պարտքային արժեթղթեր՝ C կարգի Visa բաժնետոմսեր | 2,682,714 | 2,775,053 |
| **Ընդամենը իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ բանկի կողմից պահվող պարտքային գործիքներ** | **2,682,714** | **2,775,053** |

| *Հազ. ՀՀ դրամ* | **30 հունիսի 2024թ.** | **31 դեկտեմբերի 2023թ.** |
|---|---|---|
| Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված գործիքներ | | |
| ՀՀ կառավարության արժեթղթեր | - | - |
| **Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված գործիքներ** | **-** | **-** |

2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերը հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսեր բորսաներում և քլիրինգային կենտրոններում:

2024թ. հունիսի 30-ին Խումբն իր՝ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնեմասից ստացել է 2,174 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2023թ.՝

3,185 հազ. ՀՀ դրամ), որոնք համախմբված հաշվետվությունում ճանաչվել են որպես այլ եկամուտ:

2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ մի արժեթուղթ չի եղել ժամկետանց կամ արժեզրկված, և չի եղել ներդրումային արժեթղթերի վերասակարկված մնացորդներ, որոնք այլապես ժամկետանց կլինեն:

Պարտքային գործիքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 32-ում:

## 11 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը 2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| **Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր** | | |
| ՓՄՁ վարկեր | 115,336,242 | 114,864,473 |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 87,757,897 | 76,932,670 |
| **Ընդամենը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր** | **203,094,139** | **191,797,143** |
| | | |
| **Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր (բացի գյուղատնտեսական վարկերից)** | | |
| Սպառողական վարկեր | 119,511,619 | 114,304,150 |
| Հիփոթեքային վարկեր | 62,200,231 | 54,259,632 |
| Վարկային քարտեր | 13,599,404 | 12,522,907 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | - | - |
| **Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր** | **195,311,255** | **181,086,689** |
| | | |
| Գյուղատնտեսական վարկեր մանրածախ հաճախորդներին | 74,533,579 | 71,047,964 |
| Գյուղատնտեսական վարկեր կորպորատիվ հաճախորդներին | 17,071,300 | 16,539,537 |
| **Ընդամենը գյուղատնտեսական վարկեր հաճախորդներին** | **91,604,879** | **87,587,501** |
| | | |
| Հաճախորդներին տրված վարկեր, համախառն | 490,010,272 | 460,471,333 |
| Վարկային կորստի գծով պահուստ | (5,861,970) | (5,271,996) |
| **Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով, զուտ** | **484,148,301** | **455,199,337** |

***Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով*** 2024թ. հունիսի 30-ին հաճախորդներին տրված վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքի և դրանց գծով ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **POCI** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **440,146,214** | **7,191,302** | **13,104,136** | **29,681** | **460,471,333** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 129,350,714 | - | - | - | **129,350,714** |
| Մարված ակտիվներ | (88,331,538) | (1,890,831) | (4,381,505) | (2,680) | **(94,606,554)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 163,596 | (163,267) | (329) | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (2,960,328) | 2,960,328 | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (3,235,345) | (1,335,236) | 4,570,582 | - | **-** |
| Դուրս գրված գումարներ | - | - | (224,926) | - | (224,926) |
| Արտարժույթի ճշգրտումներ | (4,778,514) | (83,943) | (117,072) | (768) | (4,980,296) |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **470,354,800** | **6,678,352** | **12,950,886** | **26,234** | **490,010,272** |

| *Հազ. ՀՀ դրամ* | Փուլ 1 | Փուլ 2 | Փուլ 3 | POCI | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **1,421,424** | **258,630** | **3,591,942** | **-** | **5,271,996** |
| **Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.** | | | | | |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 804,688 | - | - | - | **804,688** |
| Մարված ակտիվներ | (152,898) | (11,228) | (376,832) | - | **(540,958)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 12,916 | (12,916) | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (80,259) | 80,259 | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (344,997) | (164,743) | 509,739 | - | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | (10,701) | 171,371 | 1,351,779 | - | **1,512,449** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 289,822 | (19,445) | (1,485,778) | - | **(1,215,401)** |
| **Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.** | **518,571** | **43,299** | **(1,092)** | **-** | **560,778** |
| **Տեղափոխումներ՝ առանց ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցության** | | | | | |
| Չեղչի հակադարձում (նվազեցված տոկոսային հասույթից) | - | - | 302,381 | - | 302,381 |
| Դուրս գրված գումարներ | - | - | (224,926) | - | **(224,926)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (23,975) | (1,514) | (22,770) | - | **(48,259)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **1,916,020** | **300,415** | **3,645,535** | **-** | **5,861,970** |

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024թ. | 31/12/2023թ. |
|---|---|---|
| Ֆիզիկական անձինք | 269,844,832 | 252,134,658 |
| Սննդի և ըմպելիքների արտադրություն | 53,278,836 | 52,728,234 |
| Առևտուր | 41,576,562 | 40,633,968 |
| Շինարարություն | 49,124,287 | 40,810,661 |
| Արտադրություն | 11,053,244 | 9,913,225 |
| Գյուղատնտեսություն | 20,341,215 | 19,497,697 |
| Տրանսպորտ | 5,630,765 | 5,281,665 |
| Ֆինանսական հատված | 8,129,310 | 8,271,891 |
| Էներգիա | 8,677,559 | 8,936,603 |
| Այլ | 22,353,662 | 22,262,731 |
| Արժեզրկման գծով պահուստ | (5,861,970) | (5,271,996) |
| **Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով, զուտ** | **484,148,301** | **455,199,337** |

## 12 Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Ֆինանսական վարձակալություն կորպորատիվ հաճախորդներին | 81,109,783 | 78,235,588 |
| Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին | 5,777,923 | 5,947,183 |
| Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում | 86,887,706 | 84,182,771 |
| Արժեզրկման գծով պահուստ | (876,579) | (776,345) |
| **Զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում, հանած արժեզրկումը** | **86,011,127** | **83,406,426** |

Խումբը վարձակալություններ է տվել ֆիզիկական անձանց, փոքր և միջին ձեռնարկություններին, տնտեսության տարբեր ոլորտներում գործող գյուղացիական տնտեսություններին սարքավորումներ և արտադրական ռեսուրսներ ձեռք բերելու համար:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **83,119,652** | **212,056** | **851,063** | **84,182,771** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 18,138,161 | - | - | **18,138,161** |
| Մարված ակտիվներ | (13,918,006) | (90,010) | (191,098) | **(14,199,114)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 60,038 | (60,038) | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (410,531) | 410,531 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (216,301) | (81,415) | 297,716 | **-** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (1,215,931) | (5,453) | (11,309) | **(1,232,693)** |
| Դուրսգրում | - | - | (1,419) | **(1,419)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **85,557,082** | **385,671** | **944,953** | **86,887,706** |

| *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **350,131** | **5,793** | **420,421** | **776,345** |
| ***Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.*** | | | | |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 74,905 | - | - | **74,905** |
| Մարված ակտիվներ | (7,801) | (498) | (4,482) | **(12,780)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 1,230 | (1,230) | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (3,572) | 3,572 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (872) | (2,859) | 3,731 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | (1,051) | 14,356 | 118,569 | **131,874** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (45,961) | (256) | (60,601) | **(106,818)** |
| **Ընդամենը տեղափոխումներ՝ *ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ*.** | 16,879 | 13,085 | 57,217 | **87,181** |
| **Տեղափոխումներ՝ առանց *ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցության*** | | | | |
| Զեղչի հակադարձում (ճանաչված տոկոսային հասույթում) | - | - | 26,709 | **26,709** |
| Դուրսգրում | - | - | (1,419) | **(1,419)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (4,979) | (444) | (6,814) | **(12,238)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **362,031** | **18,434** | **496,113** | **876,579** |

***Բռնագանձված ակտիվներ.*** Ժամանակաշրջանի ընթացքում բռնագանձված և 2024թ. հունիսի 30-ի դրությամբ պահվող ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 23,800 հազ. ՀՀ դրամ (2023 թ.՝ 24,770 հազ. ՀՀ դրամ):

***Ֆինանսական վարձակալության պորտֆելի ճյուղային և աշխարհագրական վերլուծություն*** Կորպորատիվ հաճախորդների գծով ֆինանսական վարձակալությունը հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդների գծով է, որոնք գործում են հետևյալ տնտեսական ոլորտներում.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Շինարարություն | 22,533,559 | 23,114,134 |
| Սննդի և խմիչքների արտադրություն | 15,678,643 | 16,050,263 |
| Գյուղատնտեսություն | 8,595,524 | 8,468,466 |
| Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին | 5,777,923 | 5,879,346 |
| Առևտուր | 8,915,003 | 8,672,738 |
| Ծառայությունները | 9,592,711 | 7,429,747 |
| Արտադրություն | 10,869,953 | 9,416,904 |
| Տրանսպորտ | 4,389,055 | 4,479,002 |
| Հիդրոէլեկտրակայաններ | 91,003 | 106,293 |
| Կաշվե իրերի արտադրություն | 87,712 | 104,377 |
| Ավիափոխադրումներ | - | - |
| Այլ | 356,621 | 461,501 |
| Արժեզրկման գծով պահուստ | (876,579) | (776,345) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում** | **86,011,127** | **83,406,426** |

## 13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցների, օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և ոչ նյութական ակտիվների տեղաշարժերը հետևյալն են.

| *Հազ.  ՀՀ դրամ* | Հող և շենքեր | Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր | Սարքավորումներ | Հարմարանքներ և կցամասեր | Փոխադրամիջոցներ | Գուդվիլ | Ծրագրային ապահովում և լիցենզիաներ | Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Արժեքը/վերագնահատված գումարը** | | | | | | | | | |
| 31 դեկտեմբերի 2023թ. | **11,617,195** | **1,360,402** | **11,360,055** | **3,592,459** | **638,257** | **-** | **8,554,236** | **5,074,711** | **42,197,315** |
| Ավելացումներ | 376,420 | 150,527 | 2,009,204 | 330,299 | - | - | 524,403 | 1,127,863 | **4,518,716** |
| Օտարումներ և դուրսգրումներ | (236,588) | (37,062) | (7,337) | (65,357) | (27,600) | - | (63,253) | (128,226) | **(565,424)** |
| Վերագնահատման ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա* | - | - | - | - | - | - | - | - | - |
| Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա | - | - | - | - | - | - | - | - | - |
| Փոփոխություն | - | - | - | - | - | - | - | - | - |
| Արժեզրկման ծախս շահույթում կամ վնասում, | - | - | - | - | - | - | - | - | - |
| **30 հունիսի 2024թ.** | **11,757,027** | **1,473,867** | **13,361,922** | **3,857,400** | **610,657** | **-** | **9,015,386** | **6,074,349** | **46,150,608** |
| | | | | | | | | | |
| Կուտակված մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում | | | | | | | | | |
| 31 դեկտեմբերի 2022թ. | **251,885** | **540,802** | **5,864,914** | **2,300,030** | **74,428** | **-** | **3,761,520** | **2,292,758** | **15,086,337** |
| Մաշվածության գումարը | 109,389 | 46,141 | 531,550 | 135,241 | 39,027 | - | 467,754 | 466,869 | 1,795,971 |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | - | (8,250) | (34,786) | (4,251) | - | (56,542) | (95,305) | (199,134) |
| Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա | - | - | - | - | - | - | | - | - |
| Փոփոխություն | - | - | - | - | - | - | | - | - |
| **30 հունիսի 2024թ.** | **361,274** | **586,943** | **6,388,214** | **2,400,485** | **109,204** | **-** | **4,172,732** | **2,664,322** | **16,683,174** |
| | | | | | | | | | |
| **Զուտ հաշվեկշռային արժեք 30 հունիսի 2024թ.** | **11,395,753** | **886,924** | **6,973,708** | **1,456,915** | **501,453** | **-** | **4,842,654** | **3,410,027** | **29,467,434** |

| *Հազ. ՀՀ դրամ* | **Հող** | **Շենքեր** | **Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր** | **Սարքավորումներ** | **Հարմարանքներ և կցամասեր** | **Փոխադրամիջոցներ** | **Գուդվիլ** | **Ծրագրային ապահովում և լիցենզիաներ** | **Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Արժեքը/վերագնահատված գումարը** | | | | | | | | | | |
| 31 դեկտեմբերի 2022թ. | 1,893,965 | 10,426,493 | 812,734 | 9,522,712 | 3,284,619 | 529,300 | 18,132 | 7,957,317 | 3,846,303 | **38,291,575** |
| Լրացումներ | - | 448,737 | 547,668 | 2,177,770 | 506,440 | 134,807 | | 780,735 | 1,340,678 | **5,936,835** |
| Օտարումներ և դուրսգրումներ | (362,800) | (789,200) | - | (340,428) | (198,599) | (25,850) | (18,132) | (187,034) | (629,922) | **(2,551,965)** |
| Վերագնահատման ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա* | - | - | - | - | - | - | - | - | - | **-** |
| Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա | - | - | - | - | - | - | - | - | - | **-** |
| Փոփոխություն | - | - | - | - | - | - | - | - | 517,653 | **517,653** |
| Արժեզրկման ծախս շահույթում կամ վնասում, | - | - | - | - | - | - | - | 3,217 | - | **3,217** |
| **31 դեկտեմբերի 2023թ.** | **1,531,165** | **10,086,030** | **1,360,402** | **11,360,054** | **3,592,460** | **638,257** | **-** | **8,554,235** | **5,074,712** | **42,197,315** |
| Կուտակված մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում 31 դեկտեմբերի 2022թ. | - | 20,444 | 418,759 | 5,196,118 | 2,155,279 | 5,176 | - | 3,018,609 | 2,116,745 | **12,931,130** |
| Մաշվածության գումարը | - | 246,289 | 122,043 | 985,827 | 317,979 | 71,992 | - | 831,651 | 737,007 | **3,312,788** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (14,848) | - | (317,030) | (173,228) | (2,740) | - | (88,741) | (560,994) | **(1,157,581)** |
| Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա Փոփոխություն | - | - | - | - | - | - | - | - | - | **-** |
| **31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **251,885** | **540,802** | **5,864,915** | **2,300,030** | **74,428** | **-** | **3,761,519** | **2,292,758** | **15,086,337** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,531,165** | **9,834,145** | **819,600** | **5,495,139** | **1,292,430** | **563,829** | **-** | **4,792,716** | **2,781,954** | **27,110,978** |

* 2022թ. Խումբը ներգրավել է անկախ գնահատող իր հողերի, շենքերի և փոխադրամիջոցների իրական արժեքը որոշելու համար: Իրական արժեքը որոշվում է շուկայական ապացույցների հիման վրա:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը շահույթի կամ վնասի կազմում ճանաչել է չշահագործվող ծրագրային ապահովման համար 3,217 հազ. ՀՀ դրամի արժեզրկում (2022թ. ՝ 591,800 հազ ՀՀ. դրամ) (Ծան. 32): Արժեզրկումից կորուստները ճանաչվել են արժեզրկման թեստի արդյունքում:

## 14 Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **30/06/2023թ.** |
|---|---|---|
| Ընթացիկ շահութահարկի գծով ծախս | 3,685,950 | 2,837,780 |
| Հետաձգված հարկային կրեդիտ | (612,493) | 176,447 |
| **Շահութահարկի գծով ծախս** | **3,073,457** | **3,014,227** |

2024թ-ի հունիսի 30-ի դրությամբ ընթացիկ և հետաձգված հարկերի համար կիրառելի հարկային դրույքաչափը 18% է (2023թ.՝ 18%): Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **30/06/2023թ.** |
|---|---|---|
| **Շահույթ մինչև հարկումը** | **16,014,122** | **14,628,531** |
| Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ | 18% | 18% |
| **Շահութահարկի գծով ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով** | **2,882,542** | **2,633,136** |
| Չնվազեցվող ծախսեր, զուտ | 190,915 | 381,091 |
| **Շահութահարկի գծով ծախս** | **3,073,457** | **3,014,227** |

Չնվազեցվող ծախսերը/եկամուտները հիմնականում վերաբերում են ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված օգուտներին/վնասներին, աշխատակիցներին տրվող այլ հատուցումներին, ներկայացուցչական որոշ ծախսերին, որոշ անդամավճարներին, պայմանական պարտավորությունների պահուստին և այլն: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները և դրանց շարժը հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված է ստորև.

| *Հազ. ՀՀ դրամ* | Մնացորդ առ 1 հունվարի 2023թ. | Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում: Շահույթի կամ վնասի մասին հաշվե-տվությու-նում | Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում: Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյուն-քի մասին հաշվե-տվությու նում | Մնացորդ առ 31 դեկտեմբեր ի 2023թ. | Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում: Շահույթի կամ վնասի մասին հաշվե-տվությու-նում | Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում: Այլ համա-պարփակ ֆինան-սական արդյուն-քի մասին հաշվե-տվությունում | Մնացորդ առ 30 հունիսի 2024թ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9,575 | (8,327) | - | 1,248 | (867) | - | 381 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | (52,883) | 24,105 | - | (28,778) | 9,139 | - | (19,639) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 5,332 | (32,306) | - | (26,974) | 8,992 | - | (17,982) |
| Ներդրումային արժեթղթեր | (444,826) | (240,815) | 176,753 | (508,888) | 7,930 | (36,975) | (537,933) |
| Հաճախորդներին տրված վարկեր | (465,378) | (44,017) | - | (509,395) | 422,247 | - | (87,148) |
| Ֆինանսական վարձակալություն | 8,569 | 29,435 | - | 38,004 | (11,238) | - | 26,766 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | (174,640) | (74,263) | (17,310) | (266,213) | 94,639 | (6,264) | (177,839) |
| Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (1,298,022) | 674,084 | (127) | (624,065) | (29,640) | - | (653,705) |
| Այլ ակտիվներ | 83,535 | (95,216) | - | (11,681) | 43,599 | - | 31,918 |
| Այլ փոխառու միջոցներ | 283,985 | 239,523 | - | 523,508 | 127,647 | - | 651,154 |
| Այլ պարտավորություններ | 1,063,977 | (325,907) | - | 738,070 | (59,956) | - | 678,114 |
| Այլ ֆինանսական գործիքներ ամորտիզացված արժեքով և պահուստներ | (35,754) | (21,231) | - | (56,985) | - | - | (56,985) |
| **Հետաձգված հարկային պարտավորություններ, զուտ** | **(1,016,530)** | **125,065** | **159,316** | **(732,149)** | **612,493** | **(43,239)** | **(162,896)** |

Ճանաչված Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Հետաձգված հարկային ակտիվներ | - | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | (162,896) | (732,149) |

## 15 Վարկային կորստի գծով ծախսի հակադարձում

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2024թ. հունիսի 30-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

| *Հազ. ՀՀ դրամ* | Ծան. | Փուլ 1 | Փուլ 2 | Փուլ 3 | POCI | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | 4,817 | - | - | - | **4,817** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | (6,783) | - | - | - | **(6,783)** |
| Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր | 10 | (62,889) | - | - | - | **(62,889)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | 13,890 | - | - | - | **13,890** |
| Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով | 11 | (518,571) | (43,299) | (319,203) | - | **(881,073)** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 12 | (16,879) | (13,085) | (57,217) | - | **(87,181)** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 16 | 13,146 | - | - | - | **13,146** |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 25 | 7,452 | 9 | (8) | - | **7,452** |
| Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ | 25 | (5,692) | (356) | (1,267) | - | **(7,314)** |
| **Ընդամենը վարկային կորստի գծով պահուստի հակադարձում** | | **(571,509)** | **(56,731)** | **(377,695)** | **-** | **(1,005,934)** |

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2023թ. հունիսի 30-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ հատկացումները.

| *Հազ. ՀՀ դրամ* | **Ծան.** | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **POCI** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 44,971 | - | - | - | **44,971** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 72,005 | - | - | - | **72,005** |
| Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր | 9 | (9,359) | - | - | - | **(9,359)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 9 | (8,296) | 85,826 | - | - | **77,530** |
| Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով | 10 | (114,982) | (165,411) | 500,532 | 9,552 | **229,691** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 11 | (164,999) | 13,677 | (117,533) | - | **(268,855)** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 15 | (31,209) | - | - | - | **(31,209)** |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 25 | (10,569) | | - | - | **(10,569)** |
| Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ | 25 | 12,797 | 171 | (618) | - | **12,350** |
| **Ընդամենը վարկային կորստի գծով պահուստի հակադարձում** | | **(209,641)** | **(65,737)** | **382,381** | **9,552** | **116,555** |

## 16 Այլ ակտիվներ

Այլ ակտիվները ներառում են.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,672,748 | 2,811,989 |
| Արժեզրկման գծով պահուստ | (17,290) | (30,436) |
| **Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ** | **1,655,458** | **2,781,553** |
| | | |
| Վարձակալված գույքի մատակարարներին վճարվող կանխավճարներ | 7,968,018 | 7,372,935 |
| Աշխատողների տարաբնույթ հատուցումներ՝ անձնակազմին տրված փոխառություններ | 2,740,987 | 2,603,822 |
| Վարձակալության ենթակա գույք | 121,120 | 1,423,473 |
| Բռնագանձված ակտիվներ | 1,701,576 | 1,468,026 |
| Կանխավճարներ մատակարարներին | 430,584 | 1,200,198 |
| Վերականգնման ենթակա ԱԱՀ | 468,676 | 381,630 |
| Պաշարներ | 374,997 | 333,836 |
| Վերադարձված վարձակալական գույք | 23,800 | 24,770 |
| Այլ | 328,120 | 174,851 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **14,157,877** | **14,983,541** |
| | | |
| Հանած՝ արժեզրկման գծով ծախս | (656,841) | (656,841) |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **15,156,495** | **17,108,253** |

2024 թ. հունիսի 30-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | Փուլ 1 | Փուլ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **30,436** | **-** | **30,436** |
| Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (զուտ) | (13,146) | - | **(13,146)** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | - | | |
| Դուրսգրում | - | - | **-** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **17,290** | - | **17,290** |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | Փուլ 1 | Փուլ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **27,831** | **-** | **27,831** |
| Ստեղծված կամ վերականգնված նոր ակտիվներ (զուտ) | 6,167 | - | **6,167** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (3,562) | 3,562 | **-** |
| Դուրսգրում | - | (3,562) | **(3,562)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | 30,436 | - | **30,436** |

## 17 Բանկերից ներգրավված միջոցներ

Բանկերից ներգրավված միջոցները ներառում են հետևյալը.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024թ. | 31/12/2023թ. |
|---|---|---|
| Միջազգային բանկերից ստացված վարկեր | 26,288 | 492,851 |
| Թղթակցային հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ այլ բանկերում | 455,798 | 590,422 |
| Բանկերում կարճաժամկետ տեղաբաշխումներ | 33,894 | 69,621 |
| Վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ | - | - |
| ՀՀ այլ բանկերից ստացված վարկեր | - | - |
| **Ընդամենը բանկերից ներգրավված միջոցներ** | **515,980** | **1,152,894** |

## 18 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները ներառում են հետևյալը.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024թ. | 31/12/2023թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ** | | |
| Մանրածախ | 82,169,281 | 81,657,650 |
| Կորպորատիվ | 126,406,710 | 107,755,633 |
| Չմարված գործարքներ | 3,063,726 | 1,791,580 |
| **Ժամկետային ավանդներ** | | |
| Մանրածախ | 247,408,747 | 226,657,523 |
| Կորպորատիվ | 65,371,291 | 85,369,264 |
| **Ընդամենը** | **524,419,755** | **503,231,650** |

Չմարված գործարքները ներառում են հաշվետու ամսաթվերի դրությամբ չմարված գումարները Խմբի հաճախորդների հաշիվներում: Այս գումարը մարվել են հաջորդիվ առաջին աշխատանքային օրերին:

Համաձայն Հայաստանի օրենսդրության, Խումբը պարտավոր է ավանդները մարել ավանդատուի պահանջով: Եթե ժամկետային ավանդը մարվում է ավանդատուի պահանջով մինչև մարման ժամկետը, ապա դրա նկատմամբ տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքի հիման վրա, եթե պայմանագրում այլ տոկոսադրույք նախատեսված չէ:

## 19 Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի կազմը.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024թ. | 31/12/2023թ. |
|---|---|---|
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 22,270,810 | 21,087,118 |
| Մուրհակներ | - | - |
| **Թողարկված պարտքային արժեթղթեր** | **22,270,810** | **21,087,118** |

2024 թվականի մայիսի 2-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը ներառյալ Բանկը տեղաբաշխել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր՝ 718,400 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով և 1,780,400 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

2023 թվականի մարտի 1-ից հունիսի 30-ը Խումբը թողարկել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր՝ 12,178,400 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով և 8,932,100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

Տեղաբաշխված պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը և մարման ժամկետները հետևյալն են.

| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Մարման ամսաթիվը |
|---|---|---|---|
| 2023թ. թողարկված պարտատոմսեր | 11.5% | 5.0% | 2026թ. |
| 2024թ. թողարկված պարտատոմսեր | 9.5% | 4.5% | 2026թ. |

## 20 Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցների կազմը.

| *Հազ. ՀՀ դրամ* | 30/06/2024թ. | 31/12/2023թ. |
|---|---|---|
| Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 48,649,967 | 56,235,736 |
| Փոխառություններ ՀՀ կառավարությունից | 34,690,804 | 33,097,468 |
| Փոխառություններ տեղական ֆինանսական հաստատություններից | 2,758,143 | 2,895,519 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 3,605,523 | 2,896,371 |
| **Այլ փոխառու միջոցներ** | **89,704,437** | **95,125,094** |

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից փոխառությունները ներառում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով փոխառություններ մի քանի ֆինանսավորման ծրագրերով, որոնք ենթակա են մարման 2024թ-ից մինչև 2041թ. :

ՀՀ կառավարությունից ստացված փոխառությունները հիմնականում ներառում են ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման ծրագրերով տրամադրված ՀՀ դրամով փոխառությունները, որոնք ենթակա են մարման 2024-2033 թվականների ընթացքում:

Տեղական ֆինանսական հաստատություններից ստացված փոխառությունները ներառում են են հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերով դրամային փոխառություններ՝ որոնք ենթակա են մարման 2024-2035թթ. ընթացքում:
***Պայմանագրային դրույթների խախտում.*** 2024թ. հունիսի 30-ի դրությամբ Խումբը պահպանել է պայմանագրերի պայմանները:

## 21 Ստորադաս վարկեր

2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ Խումբն ունի ստորադաս վարկեր՝ 11,885,102 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (202 թ.՝ 12,661,577 հազ. ՀՀ դրամ): Ստորադաս վարկերը ներառում են ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված վարկերը՝ 2027-2030թթ. մարման ժամկետով և 5. 8%-ից մինչև 8. 8% տոկոսադրույքով:

## 22 Այլ պարտավորություններ

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր | 4,222,672 | 3,592,632 |
| Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր | 3,255,719 | 5,182,620 |
| Պարտավորությունների գծով պահուստ | - | - |
| Կենսաթոշակային պարտավորություններ | 72 | - |
| Երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահուստ | 1,261 | 8,764 |
| Վարկային բնույթի պարտավորությունների գծով պահուստ | 72,669 | 65,987 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **7,552,393** | **8,850,003** |
| Վարձակալներից ստացված կանխավճարներ | 2,536,606 | 2,876,064 |
| Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ | 751,039 | 818,158 |
| Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին վճարվելիք միջոցներ | 196,763 | 186,327 |
| Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ | 124,404 | 149,915 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **3,608,812** | **4,030,464** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **11,161,204** | **12,880,467** |

## 23 Կապիտալ

***Թողարկված կապիտալ.*** 2024թ. հունիսի 30-ի դրությամբ Խմբի բաժնետիրական կապիտալը կազմում էր 55,000,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 55,000,000 հազ. ՀՀ դրամ): Հաստատված, թողարկված և չմարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 5,500 հազար սովորական բաժնետոմսերից (2023թ.՝ 5,500 հազար սովորական բաժնետոմս), յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ (2023 թ.՝ 10,000 . ՀՀ դրամ) անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել Խմբի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

***Պահուստների բնույթը և նպատակը***

*Հողի, շենքերի և փոխադրամիջների վերագնահատումից աճ.* Հողի, շենքերի և փոխադրամիջների վերագնահատումից աճը ներառում է մինչև հողի, շենքերի և փոխադրամիջոցների ապաճանաչումը կամ արժեզրկումը դրանց կուտակային դրական վերագնահատված արժեքը:

***Գլխավոր պահուստի համալրում էմիսիոն եկամտի հաշվին*** 2022թ. ապրիլի 12-ին Բանկի խորհուրդը որոշել է էմիսիոն եկամուտից 750,000 հազ. ՀՀ դրամ փոխանցել Բանկի պահուստային ֆոնդ, որը ներկայացված է սույն հաշվետվության մեջ «Չբաշխված շահույթ» բաժնում: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պահուստային կապիտալը կազմում էր 8,250,000 հազ. ՀՀ դրամ (2022 թ.՝ 8,250,000 հազ. ՀՀ դրամ):

Պահուստային ֆոնդը ստեղծվել է Բանկի կանոնադրության համաձայն, որը նախատեսում է այդ նպատակների համար պահուստի ստեղծում Բանկի նորմատիվային հաշվետվողականության պահանջների ներքո ներկայացված կանոնադրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով: Պահուստային ֆոնդը չբաշխվող պահուստ է, որը ստեղծվում է նորմատիվային կանոնակարգերով սահմանված կարգով՝ ընդհանուր բանկային ռիսկերի, ներառյալ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ պայմանական դեպքերի առնչությամբ:

***Շահաբաժիններ.*** 2024թ. մայիսի 14-ի բաժնետերերի ժողովում Բանկը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հայտարարել է շահաբաժիններ՝ ընդհանուր 5,500,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 4,400,000 հազ. ՀՀ դրամ) սովորական բաժնետոմսերի համար՝ 1,000 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց (2023թ.՝ 800 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց): Շահաբաժինները վճարվել են 2024թ մայիսին:

***Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ*** Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է որպես մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի տարեկան

շահույթի և տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակի հարաբերություն:

Բանկը մտադիր է թողարկել 485,000 հատ ընդհանուր 4,850,000,000 ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմս: Ներգրավված նոր կապիտալը հնարավորություն է տալու Բանկին ավելի մեծ ծավալով միջոցներ ուղղել ՀՀ տնտեսության վարկավորմանը՝ ՓՄՁ, գյուղատնտեսական և մանրածախ ուղղություններով:

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **30/06/2023թ.** |
|---|---|---|
| **Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող շահույթ** | **12,940,665** | **11,614,304** |
| Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ | 5,500,000 | 5,500,000 |
| **Մեկ բաժնետոմսի գծով շահույթ, Բազային և Նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ** | **2,352.85** | **2,111.69** |

## 24 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

*«ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր*

2021թ. հունիսին «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն հայտարարեցին «ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի մեկնարկի մասին (այսուհետ՝ Ծրագիր)՝ որպես «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի առանցքային և հավատարիմ աշխատակիցների վարձատրման, պարգևատրման, առաջխաղացման, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս:

Ծրագրի շրջանակներում «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն «ԱԿԲԱ ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի աշխատակիցներին կտրամադրի Բանկի 300,000 (երեք հարյուր հազար) սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2021թ. հունիսին Խմբի աշխատակիցները «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ից ստացել են Բանկի 145,980 սովորական բաժնետոմս, իսկ 2023թ. հունիսին՝ 133,380 սովորական բաժնետոմս՝ տրամադրման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուրը 12,591 ՀՀ դրամ իրական արժեքով, անվճար և առանց որևէ պայմանի:

2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ, ծրագրի երկու փուլերի արդյունքում Խմբի աշխատակիցներին տրամադրված բաժնետոմսերի ընդհանուր իրական արժեքը 3,517,422 հազ. ՀՀ դրամ է, որից 440,927 հազ. ՀՀ դրամը ճանաչվել է որպես անձնակազմի գծով ծախս 2023թ. համախմբված հաշվետվությունում (2022 թ. 624,238 հազ.ՀՀ դրամ) և որպես բաժնային վճարումների պահուստ՝ սեփական կապիտալի փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում:

Ընկերությունը ներգրավել է անկախ խորհրդատուի բաժնետոմսերի իրական արժեքը գնահատելու համար: Բաժնետոմսերի գնահատման համար օգտագործվել է շահաբաժինների զեղչման մեթոդը, որ ներառում է.

- Ֆինանսական մոդելի ընդհանուր ենթադրությունների և կառուցվածքի որոշում.
- Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների հաշվեկշռի կանխատեսում.
- Բանկի և նրա դուստր ձեռնարկությունների ֆինանսական արդյունքի կանխատեսում.
- Շահաբաժինների կանխատեսում՝ հաշվի առնելով կապիտալի համարժեքության և իրացվելիության պահանջները.
- Զեղչի դրույքաչափի որոշում.
- Բանկի մնացորդային արժեքի որոշում.
- Ֆինանսական արդյունքների կանխատեսման մեջ չներառված ակտիվների և պարտավորությունների վերլուծություն.
- Բանկի սեփական կապիտալի 100%-ի հաշվարկ:

Զեղչման դրույքը որոշվել է համանման բանկի բաժնային գործիքներից պահանջվող եկամտաբերության դրույքի հիման վրա:

## 25 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

***Գործառնական միջավայր.*** Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու Խմբի բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

***Իրավական միջավայր.*** Իր բնականոն գործունեության ընթացքում Խմբի դեմ կարող են հարուցվել դատական հայցեր և պահանջներ: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) էական բացասական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

***Հարկային միջավայր.*** ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսային վճարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների գծով պարտավորություններ չեն կարող առաջադրվել, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեին իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

***Վարկային բնույթի պարտավորություններ.*** 2024թ. հունիսի 30-ի և 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

| *Հազ. ՀՀ դրամ* | ***6/30/2024 թ.*** | ***12/31/2023 թ.*** |
|---|---|---|
| **Վարկային բնույթի պարտավորություններ** | | |
| Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ | 28,096,318 | 29,184,533 |
| Ակրեդիտիվներ և երաշխիքներ | 34,242,434 | 32,123,416 |
| **Պայմանական դեպքեր և պարտավորություններ** | **62,338,752** | **61,307,949** |

2024թ. հունիսի 30-ի դրությամբ ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **60,857** | **928** | **4,202** | **65,987** |
| Նոր ակտիվներ | 15,164 | - | - | **15,164** |
| Մարված ակտիվներ | (11,419) | (118) | (1,405) | **(12,942)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 81 | (81) | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (173) | 173 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (592) | (185) | 777 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | (68) | 577 | 1,404 | **1,913** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 2,698 | (10) | 491 | **3,179** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (586) | (7) | (39) | **(632)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **65,963** | **1,277** | **5,429** | **72,669** |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Վարկեր և վարկային գծեր և վարկային քարտերի գծով պարտավորություններ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **89,281** | **(905)** | **4,483** | **92,859** |
| Նոր ակտիվներ | 22,733 | | | **22,733** |
| Մարված ակտիվներ | (25,789) | (416) | (1,912) | **(28,117)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | 186 | (186) | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (282) | 282 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (845) | (67) | 912 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | (146) | 190 | 1,346 | **1,390** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (22,187) | (477) | (651) | **(23,315)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | 406 | 6 | 25 | **437** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **63,357** | **(1,573)** | **4,203** | **65,987** |

2024թ. հունիսի 30-ի հաշվետու ժամանակաշրջանի համար երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Երաշխիքներ և ակրեդիտիվներ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **31,257,294** | **573,493** | **292,629** | **32,123,416** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 22,036,532 | - | - | **22,036,532** |
| Մարված ակտիվներ | (19,688,704) | (10,275) | (165,798) | **(19,864,777)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | - | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (68,010) | 68,010 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (361,174) | (563,218) | 924,392 | **-** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (52,736) | - | - | **(52,736)** |
| **Առ 30 հունիսի 2024թ.** | **33,123,201** | **68,010** | **1,051,223** | **34,242,434** |

| **Երաշխիքներ և ակրեդիտիվներ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ** | **8,750** | **9** | **5** | **8,764** |
| Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ. | | | | |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 397 | | | **397** |
| Մարված ակտիվներ | (399) | - | (2) | **(401)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | - | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (1) | 1 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (4) | (9) | 14 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | - | - | (3) | **(3)** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (7,444) | - | (1) | **(7,445)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | (54) | - | - | **(54)** |
| **Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.** | **1,247** | **1** | **13** | **1,261** |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| **Երաշխիքներ և ակրեդիտիվներ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **23,551,514** | **8,800** | **326,847** | **23,887,161** |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 27,997,976 | - | - | **27,997,976** |
| Մարված ակտիվներ | (19,444,488) | (8,800) | (308,433) | **(19,761,721)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | - | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (573,493) | 573,493 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (274,215) | - | 274,215 | **-** |
| Արտարժույթի ճշգրտումներ | - | - | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **31,257,294** | **573,493** | **292,629** | **32,123,416** |

| **Երաշխիքներ և ակրեդիտիվներ** *Հազ. ՀՀ դրամ* | **Փուլ 1** | **Փուլ 2** | **Փուլ 3** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | 1,896 | - | 8 | **1,904** |
| Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ. | | | | |
| Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ | 9,558 | | | **9,558** |
| Մարված ակտիվներ | (2,637) | - | (8) | **(2,645)** |
| Տեղափոխումներ Փուլ 1 | - | - | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 2 | (13) | 13 | - | **-** |
| Տեղափոխումներ Փուլ 3 | (5) | - | 5 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ | - | (4) | - | **(4)** |
| ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (49) | - | - | **(49)** |
| Արտարժույթի ճշգրտումներ | - | - | - | **-** |
| **Ընդամենը տեղափոխումներ՝ ժամանակաշրջանի ընթացքում վարկային կորստի գծով պահուստի վրա ազդեցությամբ.** | **8,750** | **9** | **5** | **8,764** |

## 26 Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամտի կազմը.

| *Հազ. ՀՀ դրամ* | **01/01/24-30/06/24 թ.** | **01/01/23-30/06/23 թ.** |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր | 33,507,919 | 29,944,191 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ | 2,455,635 | 337,959 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 632,996 | 437,564 |
| Այլ | 42,298 | 182,996 |
| | **36,638,848** | **30,902,710** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Պարտքային գործիքներ | 1,582,362 | 639,921 |
| **Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով** | **38,221,210** | **31,542,631** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 5,915,082 | 3,730,356 |
| Այլ տոկոսային եկամուտ | 102,630 | 679,052 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **6,017,712** | **4,409,408** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **44,238,922** | **35,952,039** |
| **Տոկոսային ծախս** | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 13,415,073 | 10,251,302 |
| Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների | 4,063,791 | 3,475,012 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 1,005,140 | 431,754 |
| Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ | - | 196,087 |
| Այլ | 23,455 | 22,025 |
| **Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս** | **18,507,459** | **14,376,180** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 228,707 | 82,178 |
| **Տոկոսային ծախս** | **18,736,166** | **14,458,358** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **25,502,757** | **21,493,681** |

## 27 Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամտի կազմը.

| *Հազ. ՀՀ դրամ* | **01/01/24-30/06/24թ.** | **01/01/23-30/06/23թ.** |
|---|---|---|
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 5,046,084 | 4,192,945 |
| Դրամական փոխանցումներ | 492,347 | 610,732 |
| Կանխիկացման ծառայություններ | 281,510 | 274,080 |
| Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում | 654,554 | 532,930 |
| Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից | 210,634 | 277,488 |
| Բանկային հաշիվների սպասարկման վճարներ | 81,190 | 85,024 |
| Ապահովագրական գործակալ հանդես գալու միջ. | 160,386 | 161,210 |
| Այլ | 365,016 | 152,239 |
| **Միջնորդավճարների գծով եկամուտ** | **7,291,721** | **6,286,648** |
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 2,566,869 | 2,049,438 |
| Դրամական փոխանցումներ | 89,585 | 51,581 |
| Այլ | 192,666 | 109,685 |
| **Միջնորդավճարների գծով ծախս** | **2,849,120** | **2,210,704** |
| **Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ** | **4,442,601** | **4,075,944** |

## 28 Այլ եկամուտ

| *Հազ. ՀՀ դրամ* | 01/01/24-30/06/24 թ. | 01/01/23-30/06/23 թ. |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | - | 462 |
| Ստացված շահաբաժիններ | 2,174 | 3,185 |
| Այլ | 313,837 | 368,630 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | **316,011** | **372,277** |

## 29 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

| *Հազ. ՀՀ դրամ* | 01/01/24-30/06/24 թ. | 01/01/23-30/06/23 թ. |
|---|---|---|
| Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին | 400,920 | 325,599 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 50,019 | 38,560 |
| Ինկասացիոն ծախսեր | 92,983 | 90,472 |
| Շահութահարկից բացի այլ հարկեր | 115,800 | 145,659 |
| Վճարված տույժեր և տուգանքներ | 996 | 1,261 |
| Այլ | 736,594 | 680,093 |
| **Այլ գործառնական ծախսեր** | **1,397,312** | **1,281,644** |

## 30 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| *Հազ. ՀՀ դրամ* | 01/01/24-30/06/24 թ. | 01/01/23-30/06/23 թ. |
|---|---|---|
| Գովազդային և մարքեթինգային ծառայություններ | 451,824 | 382,572 |
| Վերանորոգում և սպասարկում | 714,566 | 788,845 |
| Կապ | 238,318 | 176,402 |
| Անվտանգություն | 150,963 | 157,604 |
| Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ | 216,216 | 124,419 |
| Ապահովագրություն | 105,672 | 107,664 |
| Ներկայացուցչական ծախսեր | 29,431 | 156,870 |
| Գործառնական վարձակալության գծով ծախս | 21,269 | 20,500 |
| Այլ | 837,581 | 416,999 |
| **Այլ ընդհանուր վարչական ծախսեր** | **2,765,840** | **2,331,875** |

## 31 Այլ արժեզրկման և պահուստների հակադարձում/(ծախս)

| *Հազ. ՀՀ դրամ* | 01/01/24-30/06/24 թ. | 01/01/23-30/06/23 թ. |
|---|---|---|
| Պարտավորությունների գծով պահուստի հատկացում | - | 56,148 |
| Բռնագանձված ակտիվների արժեզրկման պահուստի հակադարձում | - | (87,622) |
| **Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս** | **-** | **(31,474)** |

## 32 Ռիսկերի կառավարում

***Ներածություն.*** Ռիսկը բնորոշ է Խմբի գործունեությանը, սակայն այն կառավարվում է ռիսկերի շարունակական նույնականացման, չափման և մոնիտորինգի գործընթացի միջոցով, որը վերահսկվում է կազմակերպության շրջանակներում համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ հստակ դերերի բաշխմամբ: Այս գործընթացը կարգավորվում է ռիսկերի սահմանաչափերով, ինչը ենթակա է մշտական վերահսկողության: Խմբում կատարվում է ռիսկի ազդեցության կառավարման պատասխանատվության բաշխում, ընդ որում յուրաքանչյուր անձ պատասխանատու է իր իրավասության ներքո գտնվող ռիսկերի համար:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության, շուկայական (որը ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերը) և գործառնական ռիսկերն են: Բացի այդ,

Խումբը ուշադրությամբ հետևում նոր առաջացող ռիսկերին, ինչպիսիք են կիբերանվտանգության սպառնալիքները, և ապահովում է ռիսկերի կառավարման գործելակերպը կարգավորող չափանիշների պահպանումը: Կանոնավոր կերպով իրականացվում են այս ռիսկերի քանակական գնահատումներ՝ որոշումների կայացման գործընթացներին օժանդակելու և Խմբի շահութաբերությունն ու կայունությունը պահպանելու նպատակով:

***Ռիսկերի կառավարման կառուցվածքը.*** Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը: Այնուամենայնիվ, առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

***Խորհուրդ.*** Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

***Խորհրդի ներքո՝ ռիսկերի կառավարման հանձնաժողով.*** Վերանայում և հաստատում է ստանդարտները և վարկային ռիսկի կառավարումը կարգավորող այլ փաստաթղթերը: Սահմանում է վարկային ռիսկի ենթարկվածության համապատասխան սահմանաչափերը, ներառյալ ճգնաժամային իրավիճակներում կիրառվող սահմանափակումները՝ ելնելով կազմակերպության չափից, բարդության աստիճանից և ֆինանսական վիճակից, և նախագծում է համապատասխան հաստատման ընթացակարգեր, որոնց միջոցով կարգավորում են սահմանաչափի գերազանցման դեպքերը:

***Գլխավոր գործադիր տնօրեն.*** Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում ռիսկերի ընդհանուր գործընթացը վերահսկելու և կառավարելու համար:

***Տնօրինության ներքո՝ ռիսկերի կառավարման հանձնաժողով.*** Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականության և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

***Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանում.*** Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն:

***Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին.*** Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Խմբի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև պատասխանատու է Խմբի ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

***Ներքին աուդիտ.*** Խմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

***Ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգեր.*** Տարբեր ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ Խումբն ընդունում է անհատական մոտեցում՝ կիրառելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, ինչպես նաև վերլուծելով տարբեր ռիսկային ցուցանիշների դինամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ: Մոդելները լրացուցիչ հակադարձ փորձարկում են անցնում՝ վավերականության ստուգման նպատակով: Խումբը նաև կիրառում է վատագույն դեպքի սցենարներ, որոնք կառաջանան այն դեպքում, երբ ծայրահեղ դեպքերը, որոնք քիչ հավանական է, որ տեղի կունենան, փաստացի տեղի են ունենում:

Ռիսկերի դիտարկումը և վերահսկումը հիմնականում իրականացվում է Խմբի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Խմբի գործարար ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև այն ռիսկի մակարդակը, որը Խումբը պատրաստ է ընդունել՝ լրացուցիչ շեշտադրելով տնտեսության ընտրված ոլորտները: Բացի այդ, Խումբը դիտարկում և գնահատում է ընդհանուր ռիսկին ենթարկվելու առավելագույն մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեությունների գծով:

Բոլոր բիզնես ուղղություններին վերաբերող վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերը վերլուծելու, վերահսկելու և վաղ հայտնաբերելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում և բացատրվում է Գլխավոր գործադիր տնօրենին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և բոլոր բիզնես ստորաբաժանումների ղեկավարներին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկին ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի դիտարկման արդյունքները, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և ռիսկերի պրոֆիլի փոփոխությունները: Եռամսյակային կտրվածքով կազմակերպվում է ոլորտային, հաճախորդների և բիզնեսի ռիսկերի մանրամասն զեկուցում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, որը պարունակում է կարևոր տեղեկատվություն Խմբի ռիսկերի գնահատման և որոշումներ կայացնելու համար:

Ռիսկերի մանրամասն հաշվետվությունները պատրաստվում և տարածվում են կազմակերպության բոլոր մակարդակներում՝ ապահովելով կիրառելի և արդիական տեղեկատվության հասանելիություն յուրաքանչյուր ստորաբաժանման համար:

Պարբերական ծանուցումներ են տրվում ռիսկի սահմանաչափերի խախտման դեպքում՝ ելնելով խախտման տեսակից և հրատապությունից: Այս ծանուցումները փոխանցվում են Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենին՝ քննարկելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

***Ռիսկերի նվազեցում.*** Որպես իր ընդհանուր ռիսկերի կառավարման մաս, Խումբն օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ գործիքներ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող ռիսկը, կապիտալի և վարկային ռիսկերը, ինչպես նաև կանխատեսվող գործարքներից առաջացող ռիսկերը կառավարելու համար:

Խումբն ակտիվորեն օգտագործում է գրավ՝ իր վարկային ռիսկերը նվազեցնելու համար:

***Ռիսկերի գերկենտրոնացում.*** Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը համանման կերպ է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումը արտացոլում է Խմբի գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Խմբի քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով դիվերսիֆիկացված պորտֆելի ապահովմանը: Վարկային ռիսկերի հայտնաբերված համակենտրոնացումները համապատասխանաբար վերահսկվում և կառավարվում են:

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնաս, հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական

համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

***Ածանցյալ ֆինանսական գործիքներ.*** Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

***Վարկային պարտավորությունների հետ կապված ռիսկեր.*** Խումբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

***Վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների գծով*** Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 12-ում և 13-ում:

***Արժեզրկման գնահատում.*** Խումբը հաշվարկում է ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) հավանականությամբ կշռված երեք սցենարների միջոցով՝ գնահատելու դրամական միջոցների ակնկալվող պակասը՝ զեղչված սկզբնավորման պահին արդյունավետ տոկոսադրույքով (EIR): Դրամական միջոցների պակասուրդը սահմանվում է որպես կազմակերպությանը վճարման ենթակա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկը: ԱՎԿ-ի հաշվարկների մեխանիզմը մանրամասն ներկայացված է ստորև՝ առանցքային բաղադրիչներով, ներառյալ.

| | |
|---|---|
| PD | Դեֆոլտի հավանականությունը (PD) ներկայացնում է սահմանված ժամանակային տիրույթում դեֆոլտի հավանականության գնահատումը: Դեֆոլտ կարող է առաջանալ գնահատված ժամանակահատվածի ցանկացած պահի, եթե գործիքը շարունակում է մնալ պորտֆելում և նախկինում չի ապաճանաչվել: |
| EAD | Դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, Սա ներառում է մայր գումարի և տոկոսների պլանավորված կամ չպլանավորված մարումները, պարտավորված միջոցների ակնկալվող գումարները և բաց թողնված վճարումների արդյունքում կուտակված տոկոսները: |
| LGD | Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Սովորաբար, LGD-ն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս |

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ): Այն դեպքում, եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, ապա պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր, հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

| | |
|---|---|
| Փուլ 1: | Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| Փուլ 2: | Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| Փուլ 3: | Վարկերը համարվում են արժեզրկված: |
| POCI: | Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը: |

***Դեֆոլտի սահմանումը.*** Խումբը ֆինանսական գործիքը համարում է դեֆոլտի ենթարկված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՊԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Բանկում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Բանկում ավելի քան 30 օր ժամկետանց են:

Խումբը բանկերում տեղաբաշխված գումարները համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսների (արժեկտրոնի) և/կամ վարկի մայր գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը,
- վերանայման կարգավիճակը,
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացումը այլ անձանց, ներառյալ կենտրոնացումը ընտանիքի անդամների շրջանում վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարվելը և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայությունը. Այս չափանիշը վերաբերվում է բոլոր վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը.
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, Խումբը դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Խմբի քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՌՆԱ (SICR) չափանիշների առկայությունից:

***Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը***

*Գանձապետական և միջբանկային հարաբերություններ.* Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

***Հաճախորդներին տրված վարկեր***

*Խմբավորում.* Հաճախորդներին տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի, ինչպես նաև 3-րդ փուլի վարկերի համար, որոնք առանձին-առանձին ենթակա չեն արժեզրկման, Խումբը հաշվարկում է ԱՎԿ-ը պորտֆելի մակարդակով: Բանկի կողմից առանձնացված են հետևյալ պորտֆելները, որոնք, PD PIT մատրիցները գնահատելու նպատակով հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի:

- Կորպորատիվ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Գյուղատնտեսական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի

հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատված շեղումը փաստացի միտումներից, հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ ուղղված են երեք PD PIT անցումային մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝. լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին համապատասխան:

***Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը.*** Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

***Դեֆոլտի ժամանակ կորստի չափը.*** Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման ՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո ՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):
***Վարկային ռիսկի զգալի աճ.*** Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: .: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

Բանկի ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.
- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

**2023թ.**

- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, միջին ամսական,
- Արտահանում, %,
- Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ.
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ;
- Ծառայությունների տարեկան աճ.
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ
- ՀՆԱ աճ,%;

**2022թ.**

- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- Սպառողական գների գնաճ.
- Ներմուծման տարեկան աճ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ
- Գյուղատնտեսական արտադրության տարեկան աճ.
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ;
- Մ2 դրամական պաշարների աճ.

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ, ՀՀ ԿԲ, ինչպես նաև ՀՀ ՖՆ): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

**Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում:** Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը չի կարողանա սահմանված ժամկետներում կատարել իր վճարային պարտավորությունները՝ բնականոն և անկանխատեսելի պայմաններում: Հիմնվելով իրացվելիության ռիսկի սեփական մոդելի վրա՝ բանկը կիրառում է մի շարք գործիքներ՝ իրացվելիության ռիսկերը վերահսկելու և կառավարելու համար: Բանկի ներսում սթրեսային սցենարը, որը ընկած է մոդելի հիմքում և կարևոր է կառավարման նպատակների համար, հաշվի է առնում ինչպես բանկին բնորոշ սթրեսային դեպքերը, այնպես էլ ավելի լայնածավալ շուկայական ճգնաժամերը:

Այս ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունը կազմակերպել է դիվերսիֆիկացված ֆինանսավորման աղբյուրներ՝ ի լրումն իր հիմնական ավանդների բազայի: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

***Շուկայական ռիսկ.*** Շուկայական ռիսկը պոտենցիալ ֆինանսական վնասի ռիսկն է, որը պայմանավորված է շուկայական գների (տոկոսադրույքներ, ապրանքներ, վարկային սպրեդներ, փոխարժեքներ և սեփական կապիտալի գներ) կամ այլ պարամետրերի փոփոխություններով, որոնք ազդում են գների վրա, ինչպես, օրինակ, տատանումները և հարաբերակցությունները:

***Տոկոսադրույքի ռիսկ.*** Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական արդյունքների մասին Խմբի համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

***Արժութային ռիսկ.*** Արժութային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Տնօրինությունը սահմանել է արտարժութային դիրքերի ավելի խիստ սահմանաչափեր, քան ԿԲ կողմից սահմանված նորմատիվներն են: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների:

| **2024թ. հունիսի 30** | ՀՀ դրամ | I Խմբի արտարժույթ | II Խմբի արտարժույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Ակտիվներ*** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 34,518,176 | 23,951,684 | 2,909,595 | **61,379,455** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 115,127 | 22,202 | - | **137,329** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 31,880,712 | 34,328,539 | 23 | **66,209,274** |
| Ներդրումային արժեթղթեր | 40,851,073 | 17,963,108 | - | **58,814,181** |
| Հաճախորդներին տրված վարկեր | 354,451,385 | 128,885,594 | 811,322 | **484,148,301** |
| ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 61,829,320 | 24,181,807 | - | **86,011,127** |
| Այլ ֆինանասական ակտիվներ | 9,924,111 | 5,213,219 | 19,165 | **15,156,495** |
| **Ընդամենը** | **533,569,903** | **234,546,153** | **3,740,105** | **771,856,161** |
| ***Պարտավորություններ*** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 82,446 | 433,534 | - | **515,980** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 331,808,077 | 189,298,974 | 3,312,704 | **524,419,755** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 16,121,189 | 6,149,621 | - | **22,270,810** |
| Այլ փոխառություններ | 48,570,755 | 41,133,682 | **-** | **89,704,437** |
| Այլ պարտավորություններ | 6,907,820 | 608,120 | 36,452 | **7,552,392** |
| Ստորադաս վարկեր | **-** | 11,885,102 | **-** | **11,885,102** |
| **Ընդամենը** | **403,490,286** | **249,509,033** | **3,349,156** | **656,348,475** |
| ***Զուտ դիրք*** | **130,079,617** | **(14,962,880)** | **390,949** | **115,507,686** |

| 2023թ. Դեկտեմբերի 31 | ՀՀ դրամ | I Խմբի արտարժույթ | II Խմբի արտարժույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 36,362,803 | 38,301,635 | 3,495,411 | **78,159,849** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 165,287 | 34,670 | - | **199,957** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 67,791,957 | 31,497,660 | 120,897 | **99,410,514** |
| Ներդրումային արժեթղթեր | 9,896,342 | 11,526,594 | - | **21,422,936** |
| Հաճախորդներին տրված վարկեր | 326,708,595 | 128,456,944 | 33,798 | **455,199,337** |
| ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 58,108,518 | 25,297,908 | - | **83,406,426** |
| Այլ ֆինանասական ակտիվներ | 12,221,628 | 4,877,898 | 8,727 | **17,108,253** |
| **Ընդամենը** | **511,255,130** | **239,993,309** | **3,658,833** | **754,907,272** |
| *Պարտավորություններ* | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 725,257 | 427,637 | - | **1,152,894** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 314,592,394 | 184,263,957 | 4,375,299 | **503,231,650** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 15,399,023 | 5,688,095 | - | **21,087,118** |
| Այլ փոխառություններ | 45,988,742 | 49,136,352 | **-** | **95,125,094** |
| Այլ պարտավորություններ | 8,235,439 | 580,632 | 33,932 | **8,850,003** |
| Ստորադաս վարկեր | **-** | 12,661,577 | **-** | **12,661,577** |
| **Ընդամենը** | **384,940,854** | **252,758,250** | **4,409,231** | **642,108,335** |
| ***Զուտ դիրք*** | **126,314,276** | **(12,764,941)** | **(750,398)** | **112,798,937** |

**Գործառնական ռիսկ.** Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաստիճան պաշտպանության մեխանիզմ: Պաշտպանության առաջին աստիճանը ապահովում են հաճախորդների սպասարկման աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը, պաշտպանության երկրորդ աստիճանը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների կողմից, ներքին աուդիտի գործառույթով ապահովվում է պաշտպանության երրորդ աստիճանը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Տնօրինությունը սահմանել է նաև գործառնական ռիսկի ռիսկի ախորժակի սահմանաչափ:

## 33 Իրական արժեքի չափում

***Իրական արժեքի չափման գործընթաց.*** Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծության համար ղեկավարությունը ստուգում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

***Իրական արժեքի հիերարխիա.*** Խումբն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար:

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման նպատակով Խումբը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի, բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

| *Հազ. ՀՀ դրամ* 30 հունիսի 2024թ. | Իրական արժեքի չափում՝ օգտագործելով | | | |
|---|---|---|---|---|
| | Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1) | Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2) | Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3) | Ընդամենը |
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | | | | |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 137,329 | - | **137,329** |
| Բաժնային գործիքներ | 2,682,714 | - | - | **2,682,714** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Պարտքային գործիքներ | - | 18,615,295 | - | **18,615,295** |
| Բաժնային գործիքներ | 10,528 | - | - | **10,528** |
| Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ | - | - | 387,425 | **387,425** |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ | - | - | 11,897,206 | **11,897,206** |
| Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 22,336,499 | 39,042,956 | - | **61,379,455** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | - | 30,460,204 | 35,749,070 | **66,209,274** |
| Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով | - | 37,118,219 | - | **37,118,219** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | - | - | 86,011,127 | **86,011,127** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | - | 1,655,458 | **1,655,458** |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | - | 484,148,300 | **484,148,300** |
| **Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | - | 208,575,991 | 315,843,764 | **524,419,755** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 22,270,810 | - | **22,270,810** |
| Բանկերից ներգրավված միջոցներ | - | 410,279 | 105,701 | **515,980** |
| Ստորադաս վարկեր | - | - | 11,885,102 | **11,885,102** |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 89,704,437 | **89,704,437** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | 7,552,393 | **7,552,393** |

| *Հազ. ՀՀ դրամ* **31 դեկտեմբերի 2023թ.** | **Իրական արժեքի չափում՝ օգտագործելով** | | | |
|---|---|---|---|---|
| | **Ակտիվ շուկաների գնանշումներ (Մակարդակ 1)** | **Նշանակալից դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)** | **Նշանակալից ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)** | **Ընդամենը** |
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | | | | |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 199,957 | - | **199,957** |
| Բաժնային գործիքներ | 2,775,053 | - | - | **2,775,053** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Պարտքային գործիքներ | - | 18,534,900 | - | **18,534,900** |
| Բաժնային գործիքներ | 11,343 | - | - | **11,343** |
| Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ | - | - | 101,640 | **101,640** |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ | - | - | 11,929,139 | **11,929,139** |
| Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 22,665,289 | 55,494,560 | - | **78,159,849** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | - | 32,832,740 | 66,577,774 | **99,410,514** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | - | - | 83,406,426 | **83,406,426** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | - | 2,781,553 | **2,781,553** |
| Հաճախորդներին տրված վարկեր | - | - | 455,199,337 | **455,199,337** |
| **Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | - | 189,413,283 | 313,818,367 | **503,231,650** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 21,087,118 | - | **21,087,118** |
| Բանկերից ներգրավված միջոցներ | - | 428,504 | 724,390 | **1,152,894** |
| Ստորադաս վարկեր | - | - | 12,661,577 | **12,661,577** |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 95,125,094 | **95,125,094** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | 8,850,003 | **8,850,003** |

2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտ են դրանց հաշվեկշռային արժեքներին:

***Գնահատման մեթոդաբանություն և ենթադրություններ*** Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

*Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին*

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ մարման ժամկետով (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

*Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը*

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա, էական ճշգրտմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:
*Հող և շինություններ*

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամուտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի շահագործման մնացած տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողության արդյունք է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

Շենքերի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում՝ հաշվի առնելով գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների նշանակալից դիտարկելի ճշգրտումները (գործակիցները): Համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ գնահատման ենթակա գույքը վերագնահատվում է 3 տարին մեկ անգամ, եթե շուկայում էական շեղումներ տեղի չեն ունենում: 2023թ.-ի համար կատարվել է ուսումնասիրություն և ըստ հաշվարկների էական շեղումներ չեն արձանագրվել: 1,225,965 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարում միջին կշռված շեղումը կազմում է 13. 8%:

***Ածանցյալ ֆինանսական գործիքներ.*** Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ

կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոփ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

***Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ*** Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

## 34 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

| **30 հունիս 2024թ.** *Հազ. ՀՀ դրամ* | **Խնդրահարույց/ ժամկետանց վարկեր** | **Ժամկե-տային** | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **1-ից 5 տարի** | **ավելի քան 5 տարի** | **Անժամկետ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | 61,379,455 | | | | | | **61,379,455** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | | | 137,329 | | | | | | **137,329** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | | 33,466,186 | | - | - | - | 32,743,088 | **66,209,274** |
| Ներդրումային արժեթղթեր | | | 7,777 | 7,775,470 | 22,463,122 | 16,779,395 | 9,264,899 | 2,523,518 | **58,814,181** |
| Հաճախորդներին տրված վարկեր | 844,085 | 13,988,222 | 16,214,442 | 26,640,826 | 100,657,238 | 199,589,721 | 126,213,766 | - | **484,148,301** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 89,086 | 597,613 | 4,358,847 | 4,808,979 | 16,822,581 | 53,645,726 | 5,688,297 | - | **86,011,128** |
| Այլ ակտիվներ | - | - | 1,655,458 | - | - | 2,740,987 | - | 10,760,049 | **15,156,495** |
| **Ընդամենը** | **933,171** | **14,585,835** | **117,219,494** | **39,225,274** | **139,942,941** | **272,755,828** | **141,166,962** | **46,026,656** | **771,856,162** |
| | | | | | | | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | | |
| Բանկերից ներգրավված միջոցներ | | | 489,692 | 26,288 | | - | - | - | **515,980** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | 209,269,922 | 39,557,122 | 195,034,829 | 75,837,862 | 4,720,020 | | **524,419,754** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր | | | | 173,583 | 101,463 | 21,995,764 | | | **22,270,810** |
| Այլ փոխառու միջոցներ | | | 2,280,778 | 4,502,647 | 18,764,208 | 54,137,211 | 10,019,593 | - | **89,704,437** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | | | 4,224,004 | | 3,328,388 | | | | **7,552,393** |
| Ստորադաս վարկեր | | | | 76,299 | 30,315 | 1,662,880 | 10,115,607 | - | **11,885,102** |
| **Ընդամենը** | **-** | **-** | **216,264,397** | **44,335,939** | **217,259,204** | **153,633,717** | **24,855,220** | - | **656,348,476** |
| | | | | | | | | | |
| **Իրացվելիության կուտակային բացը** | **933,171** | **14,585,835** | **(99,044,903)** | **(5,110,665)** | **(77,316,263)** | **119,122,111** | **116,311,743** | **46,026,656** | **115,507,686** |
| **Իրացվելիության կուտակային բացը** | | | **(83,525,897)** | **(88,636,561)** | **(165,952,824)** | **(46,830,713)** | **69,481,030** | **115,507,686** | |

| **31 դեկտեմբերի 2023թ.** *Հազ. ՀՀ դրամ* | **Խնդրահարույց/ ժամկետանց վարկեր** | **Ժամկե-տային** | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **1-ից 5 տարի** | **ավելի քան 5 տարի** | **Անժամկետ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | 78,159,849 | | | | | | **78,159,849** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | | | 199,957 | | | | | | **199,957** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | | 62,018,357 | - | - | - | - | 37,392,157 | **99,410,514** |
| Ներդրումային արժեթղթեր | | | 8,070 | 154,501 | 5,697,695 | 10,886,221 | 1,788,413 | 2,888,036 | **21,422,936** |
| Հաճախորդներին տրված վարկեր | 644,010 | 8,250,895 | 15,114,543 | 21,631,499 | 97,814,329 | 190,109,274 | 121,634,787 | - | **455,199,337** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 18,284 | 903,685 | 3,530,502 | 4,218,431 | 14,243,689 | 54,803,538 | 5,688,297 | - | **83,406,426** |
| Այլ ակտիվներ | - | - | 2,781,553 | - | - | 2,603,823 | - | 11,722,877 | **17,108,253** |
| **Ընդամենը** | **662,294** | **9,154,580** | **161,812,831** | **26,004,431** | **117,755,713** | **258,402,856** | **129,111,497** | **52,003,070** | **754,907,272** |
| | | | | | | | | | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | | |
| Բանկերից ներգրավված միջոցներ | | | 851,071 | - | 301,823 | - | - | - | **1,152,894** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | 205,366,218 | 48,932,110 | 166,593,956 | 77,765,752 | 4,573,614 | - | **503,231,650** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր | | | - | 150,042 | 119,101 | 20,817,975 | - | - | **21,087,118** |
| Այլ փոխառու միջոցներ | | | 1,377,464 | 4,462,755 | 18,573,495 | 58,809,216 | 11,902,164 | - | **95,125,094** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | | | 3,601,395 | - | 5,248,608 | - | - | - | **8,850,003** |
| Ստորադաս վարկեր | | | - | - | 105,126 | 1,791,600 | 10,764,851 | - | **12,661,577** |
| **Ընդամենը** | **-** | **-** | **211,196,148** | **53,544,907** | **190,942,109** | **159,184,543** | **27,240,629** | **-** | **642,108,336** |
| | | | | | | | | | |
| **Իրացվելիության կուտակային բացը** | **662,294** | **9,154,580** | **(49,383,317)** | **(27,540,476)** | **(73,186,396)** | **99,218,313** | **101,870,868** | **52,003,070** | **112,798,936** |
| **Իրացվելիության կուտակային բացը** | | | **(39,566,443)** | **(67,106,919)** | **(140,293,315)** | **(41,075,002)** | **60,795,866** | **112,798,936** | |

## 35 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:
Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքներ իրականացնել, որոնք չէին իրականացվի չկապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել չկապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30 Հունիս 2024թ.** | | | **31 Դեկտեմբեր 2023թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Մայր ընկերություն** | **Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ** | **Ասոցիացված ընկերու-թյուններ** | **Մայր ընկերություն** | **Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի մերձավոր անդամներ** | **Ասոցիացված ընկերու-թյուններ** |
| Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ | 2,275,152 | 1,164,526 | - | 2,127,184 | 971,585 | - |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր | 190,946 | 547,581 | - | 638,672 | 941,667 | - |
| Տարվա ընթացքում մարված վարկեր | (278,627) | (462,187) | - | (583,349) | (752,215) | - |
| Այլ փոփոխություններ | 85,032 | 10,478 | - | 92,645 | 3,490 | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, համախառն | 2,272,503 | 1,260,398 | - | 2,275,152 | 1,164,527 | - |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի | (6,746) | (3,447) | - | (6,754) | (3,185) | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկեր, զուտ | 2,265,757 | 1,256,951 | - | 2,268,398 | 1,161,342 | - |
| Վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը | 8.5% | 6.9% | - | 8.5% | 6.6% | - |
| Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ1 հունվարի | 562,363 | 1,660,409 | 2,152,010 | 159 | 1,547,505 | 1,656,557 |
| Տարվա ընթացքում ներգրավված ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 3,311,010 | 2,721,144 | 376,524 | 4,640,042 | 4,450,085 | 1,484,712 |
| Տարվա ընթացքում մարված ընթացիկ հաշիվներ և ավանդներ | (570,969) | (1,526,955) | (1,441,504) | (4,080,144) | (4,400,884) | (991,300) |
| Այլ փոփոխություններ | 1,375 | (84,074) | 3,727 | 2,307 | 63,703 | 2,041 |
| **Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ 31 դեկտեմբերի** | **3,303,780** | **2,770,524** | **1,090,757** | **562,364** | **1,660,409** | **2,152,010** |

## 36 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (31 դեկտեմբերի 2023թ.՝ 49%): Խմբի ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2024թ. հունիսի 30-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 1,345,194 հազ. ՀՀ դրամ (2023 թ.՝ 1,775,530 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է էական ասոցիացված կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| Ընդամենը ակտիվներ | **3,361,683** | **4,313,928** |
| Ընդամենը պարտավորություններ | **616,389** | **690,395** |
| **Զուտ ակտիվներ** | **2,745,294** | **3,623,533** |
| **Խմբի մասնաբաժինը զուտ ակտիվներում** | **1,345,194** | **1,775,530** |

Ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամտում խմբի մասնաբաժինը հետևյալն է.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ.** | **31/12/2023թ.** |
|---|---|---|
| **Հաշվետու տարվա շահույթ** | **557,105** | **1,019,338** |
| Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) | 28,534 | 92,546 |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **585,639** | **1,111,884** |

Խումբը 2024թ.հունիսին 2023 դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացել է 1,021,505 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2023թ.՝ 698,577 հազ. ՀՀ դրամ):

## 37 Կապիտալի համարժեքություն

Խումբը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Խմբի կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները:

Խումբը որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ վարկային կազմակերպությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) պետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2024թ. հունիսի 30-ի դրությամբ այս նվազագույն մակարդակը կազմում էր 11% (2023թ. դեկտեմբերի 31՝ 11%): Խումբը 2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահպանում է կանոնադրական կապիտալի գործակցի գծով պահանջը:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս կապիտալի համարժեքության կազմը, որը հաշվարկվել է ըստ ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգի՝ հետագա փոփոխություններով, ներառյալ

շուկայական ռիսկերը ներառող փոփոխությունը 2024թ. հունիսի 30-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| *Հազ. ՀՀ դրամ* | **30/06/2024թ. (աուդիտ չանցած)** | **31/12/2023թ. (աուդիտ չանցած)** |
|---|---|---|
| 1-ին դասի կապիտալ | 120,694,090 | 122,505,579 |
| 2-րդ դասի կապիտալ | 19,305,944 | 15,241,604 |
| **Ընդամենը կապիտալ** | **140,000,034** | **137,747,183** |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ** | **674,607,850** | **698 734 440** |
| **Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվների տոկոս (ընդհանուր կապիտալի ցուցանիշ)** | **20.75%** | **19.71%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

## 38 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Բանկը մտադիր է թողարկել 485,000 հատ ընդհանուր 4,850,000,000 ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմս: Ներգրավված նոր կապիտալը հնարավորություն է տալու Բանկին ավելի մեծ ծավալով միջոցներ ուղղել ՀՀ տնտեսության վարկավորմանը՝ ՓՄՁ, գյուղատնտեսական և մանրածախ ուղղություններով:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո կամ հաշվետվության ամսաթվի դրությամբ տեղի չեն ունեցել այլ նշանակալի իրադարձություններ, որոնք ենթակա են ներկայացման այս ֆինանսական հաշվետվություններում: